



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվական



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 2.1 Բարեգործության վերաբերյալ ոչ միայն ամերիկացիների հրապարակախոսության վարձույթները	4
1.1 Վարձույթներ 2022 թվականի առաջին կիսամյակում հրապարակված աշխատանքները	4
2. Վարձույթների եվ հրապարակախոսության վարձույթները	10
2.1 Նյութականության բնույթը հրապարակախոսության վարձույթները	10
2.2 Օրենսդրական ակտերի փոփոխությունների նախագծերի մշակման աշխատանքները	17
2.3 Հանձնաժողովում ՍՏԱՅՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ՀՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԾԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ	18
2.4 Հանձնաժողովում ՍՏԱՅՎԱԾ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	22
2.5 Հանձնաժողովի ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	23
3. Կրթական, Հանրային Իրազեկվածություն Ծրագրերի Եվ Մոնիթորինգի վարձույթները	24
3.1 Նյութականության եվ օրենքով սահմանված գործառնություններից բնույթ հրապարակախոսության վարձույթները	24
3.2. ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ	28
3.3 ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆԵՐՔՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	29
3.4 ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	32
3.5 ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ..	35
4. Մեթոդական ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ	37
4. 1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻՑ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԵՆՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	39
4.1.1 ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ	39
4.1.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.	43
4.2 ԲԿԳ ԱՋԱԿԻՑ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ	46



4.3 ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....	46
4.4 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	47
5. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ	49
5.1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻՑ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	49
5.2 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	50
6. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	60
6.1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻՑ և ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	60
6.2 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	63
6.3 ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ	64
6.4 ԴԻՄՈՒՄՆԵՐ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	65
6.5 ԴԻՄՈՒՄՆԵՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	74
6.6 ԴԻՄՈՒՄՆԵՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	74
6.7 ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ	75
6.8 ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ	77
6.9 ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	78
6.9.1 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	78
6.9.2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ԿԻՐԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ	81
6.9.3 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ	82
6.9.4 ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ.....	82
6.10 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԿԱՐԾԻՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....	83
6.11 ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	84



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը միտված է Հանձնաժողովի՝ հանրային հաշվետվողականության բարձրացմանը: Համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքի՝ Հանձնաժողովն իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ներկայացնում է հաղորդում, որը տեղադրվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Սույն հաշվետվությունը կազմվել է Հանձնաժողովի կառուցվածքային վեց ստորաբաժանումների՝ 2022 թվականին իրականացված գործունեության արդյունքների հիման վրա: Այն բաղկացած է ներածությունից, բովանդակում է յուրաքանչյուր ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված լիազորություններից բխող աշխատանքներ, այդ թվում՝ հայտարարագրման առնչվող տվյալներ և իրականացված վարույթներ, ներկայացվում է վիճակագրություն, Հանձնաժողովի՝ տեղական ու միջազգային կառույցների հետ ունեցած փոխգործակցության վերաբերյալ տեղեկատվություն, տարաբնույթ հարցումներին տրամադրված պարզաբանումներ, ինչպես նաև հետագա անելիքների վերաբերյալ որոշ մանրամասներ:

1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


1.1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2022 թվականի առաջին կիսամյակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 261 անձի բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել 257 խորհրդատվական բնույթի եզրակացություն: 4 անձի վերաբերյալ իրականացվել է բարեվարքության ուսումնասիրություն, սակայն բարեվարքության խորհրդատվական բնույթի եզրակացություններում անձանց



բարեվարքության վերջնական գնահատական չի տրվել՝ վերջիններիս կողմից ներկայացված տվյալների թերի լինելու պատճառով:


2022 թ. առաջին կիսամյակում իրականացված բարեվարքության ուսումնասիրություններ



- Ներկայացվել է խորհրդատվական բնույթի եզրակացություն
- Իրականացվել է գույքային դրության ուսումնասիրություն, սակայն եզրակացություն չի կազմվել

261 եզրակացությունից 149-ը եղել են դրական, 29-ը՝ բացասական, 78-ը՝ դրական վերապահումով: 1 անձի վերաբերյալ որոշում չի կայացվել՝ Հանձնաժողովի անդամների ծայների հավասար բաշվելու հետևանքով:

2022 թ. առաջին կիսամյակում ներկայացված եզրակացություններ



- Դրական
- Բացասական
- Վերապահումով
- Որոշում չի կայացվել

Ներկայացված եզրակացություններից 34-ը վերաբերում են Հակակոռուպցիոն դատարանի դատավորի թեկնածուներին, 14-ը՝ վերաքննիչ



քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների թեկնածուներին, 20-ը՝ վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների թեկնածուներ, 45-ը՝ Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուներին, 100-ը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, 15-ը՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող դատախազի թեկնածուներին, 1-ը՝ Գլխավոր դատախազի թեկնածուին, 32-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոններում նշանակվել հավակնող թեկնածուներին:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից թեկնածուների բարեվարքության վերաբերյալ դրական եզրակացություններ ներկայացվել են բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրությունների արդյունքում վերջիններիս բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոնների վերաբերյալ տեղեկություններ Հանձնաժողովը ձեռք չի բերել: Միաժամանակ գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները մեծամասամբ ազդեցություն չեն ունեցել թեկնածուների բարեվարքության գնահատականի վրա այն դեպքերում, երբ դրանց քանակը և բնույթը հաշվի առնելով Հանձնաժողովը դրանք չի դիտարկել որպես բացասական գործոն և, կամ խախտումների մեծ մասը եղել է տեխնիկական բնույթի և (կամ) վերաբերել է թեկնածուների ընտանիքի անդամներին, ինչպես նաև այն դեպքում, երբ թեկնածուների կողմից ներկայացված պարզաբանումները և տրամադրած լրացուցիչ փաստաթղթերը փարատել են Հանձնաժողովի մոտ թեկնածուի և վերջինիս ընտանիքի անդամների գույքային դրության արժանահավատության առնչությամբ մտահոգություններն ու ռիսկերը:

Հարկ է նշել նաև, թեկնածուների կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև դրա վերաբերյալ բարեվարքության հարցաթերթիկում տվյալ չներկայացնելը գնահատվել են յուրաքանչյուր դեպքով առանձին՝ հաշվի առնելով դրանց քանակը, բնույթը և վաղեմության ժամկետներ:

Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ դրական վերապահումով եզրակացություններ ներկայացվել են բոլոր այն դեպքերում, երբ.

-բարեվարքության հարցաթերթիկում և հայտարարագրերում ներկայացված տվյալների, ինչպես նաև Հանձնաժողովին հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների համադրման արդյունքներով դուրս են բերվել Թեկնածուների գույքային դրության վերաբերյալ որոշակի անհամապատասխանություններ, որոնք առանձին-առանձին թեև որպես բացասական գործոն չեն դիտարկվել, սակայն իրենց համակցության մեջ,



ձևավորել են Թեկնածուի և նրա ընտանիքի անդամի գույքային դրության վերաբերյալ անարժանահավատություն և դիսկ: Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ արձանագրված գույքային անհամապատասխանությունների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները, բայց նաև բավարար չեն եղել բացասական գնահատականի ձևավորման համար՝ Հանձնաժողովը դրանք նույնպես գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն:

- Թեկնածուները ենթարկված են եղել վարչական կամ կարգապահական պատասխանատվության, յուրաքանչյուր դեպքում հատկապես ուսումնասիրելով դրանց քանակը և բնույթը, նշանակված կարգապահական տույժի ժամկետները, ինչից ելնելով Հանձնաժողովի կողմից հիշյալ հանգամանքները գնահատվել են որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն: Միաժամանակ, Հանձնաժողովը բարեվարքության եզրակացության գնահատականի կազմման համար վարչական իրավախախտումների՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների քանակը և դրանց բնույթը, դիտարկել է բարեվարքության վրա ազդեցություն ունեցող այլ գործոնների վերաբերյալ տեղեկությունների համադրմամբ:

- Թեկնածուների աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի առնչությամբ առկա տեղեկությունները, դրանց վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների քանակը և բնույթը, ինչպես նաև դրանց վերաբերյալ անկողմնակալ դիտորդի հնարավոր ընկալումները Հանձնաժողովի մոտ ձևավորել են թեկնածուների անկախության, անաչառության և ապաքաղաքական լինելու պահանջների ապահովման խոցելիության առնչությամբ որոշակի դիսկեր:

Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացություններ ներկայացվել են հիմնականում այն դեպքերում, երբ.


- Թեկնածուների և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերում, ինչպես նաև բարեվարքության հարցաթերթիկում ներկայացվել են թեկնածուի գույքային դրության առնչությամբ էական նշանակության ունեցող ոչ ամբողջական տվյալներ, իսկ առանձին դեպքերում ներկայացված տվյալները պաշտոնական այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով չեն հաստատվել, ինչի արդյունքում դուրս են բերվել գույքային դրության վերաբերյալ անհամապատասխանություններ, որոնք ձևավորել են վերջիններիս գույքի ծագման աղբյուրների կամ եկամուտների օրինականության վերաբերյալ անարժանահավատություն: Այն դեպքերում, երբ առկա անհամապատասխանությունները և, հատկապես, գույքի ծագման աղբյուրների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները՝ ձևավորելով գույքային դրության



վերաբերյալ անարժանահավաստություն և ոխակ, Հանձնաժողովը դրանք գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոն: Թեկնածուների ընդամենի անդամների գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի մտահոգություններն առավել ընդգծվել են այն համատեքստում, երբ վերջիններիս ընդամենի անդամները տարիներ շարունակ զբաղեցրել են հիմնականում պետական պաշտոններ: Թեկնածուների հետ համատեղ բնակվող անձանց՝ հիմնականում ամուսինների և ծնողների, հայտարարագրեր չներկայացնելու փաստը Հանձնաժողովը նույնպես գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հետազայում օրենքով սահմանված կարգով բոլոր հայտարարագրերը ներկայացնելու ուժով Հանձնաժողովը գրկված չի եղել թեկնածուների և նրանց ընդամենի անդամների գույքային դրության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն կատարելու հնարավորությունից:

- Թեկնածուների՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու և դրանց վերաբերյալ բարեվարքության հարցաթերթիկում տվյալներ չներկայացնելու դեպքում՝ հատկապես հաշվի առնելով կարգապահական տույժերի քանակը, խախտման բնույթը, տույժի խիստ տեսակը, ինչպես նաև կարգապահական տույժերը վերջին տարիներին կիրառված լինելու հանգամանքները, Հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն:

Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ մյուս բոլոր խնդիրները, մասնավորապես թեկնածուների կողմից բարեվարքության հարցաթերթիկում տվյալներ չներկայացնելը, աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի առնչությամբ ձեռքբերված տվյալները, Թեկնածուներին համապատասխան պաշտոններում նշանակելու դեպքում շահերի բախման հնարավոր իրավիճակները և այլն, Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրել և դիտարկել է թեկնածուների վերաբերյալ արձանագրված այլ անհամապատասխանությունների հետ համադրությամբ:



Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության եզրակացությունների արդյունքներով համապատասխան ցուցակներում թեկնածուներին ընդգրկելու վերաբերյալ տվյալներն ամբողջական ամփոփված չեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձին դեպքերում ցուցակների համալրման նպատակով հարցազրույցներ դեռևս չեն իրականացվել:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոններ և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության կարգավորումները:

Միաժամանակ, թվով 11 թեկնածուների գրավոր դիմումների հիման վրա վերջիններիս տրամադրվել են իրենց վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացության օրինակները:



Վարչության կողմից նաև տրամադրել է թվով 50 հայտարարատու անձանց կողմից ներկայացված ուղղման դիմումների կապակցությամբ տեղեկատվություն՝ վերջիններիս կողմից դիմումում նշված անհամապատասխանությունները բարեվարքության ուսումնասիրության գործընթացում հայտնաբերված լինելու հանգամանքի վերաբերյալ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից արդեն իսկ իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերիվազորների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ են տրամադրվում թեկնածուների վերաբերյալ: Միաժամանակ, «Հակակոռուպցիոն կոմիտեի» մասին օրենքի կարգավորումներին համապատասխան՝ նախատեսվում է նաև գործարկել Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ քննիչների բարեվարքության ուսումնասիրություն:

Այլ մարմինների քննիչների վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն իրականացնելու պահանջ դեռևս սահմանված չէ օրենսդրությամբ: Համապատասխան կարգավորումների առկայության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կիրականացնի նաև տվյալ մարմինների քննիչների վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն:

2. ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Վարչությունն ապահովել է Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների իրավական ապահովման աշխատանքները:

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունեն Հանձնաժողովին օրենսդրությամբ վերապահված՝ առանձին տեսակի վարույթներ իրականացնելու լիազորությունները, ինչպես նաև կոնկրետ գործերով դրանց իրացման արդյունքում կայացված որոշումներն ու եզրակացությունները:

Այսպես, Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հաշվետու ժամանակահատվածում հարուցել և իրականացրել է՝

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝ հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ,



○ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի կողմից հարուցվող կարգապահական վարույթներ

Հանձնաժողովը կոնկրետ գործերով վարույթների հարուցմամբ իրականացնում է *արտաքին ներգործություն ունեցող վարչարարություն, որի շրջանակներում, մասնավորապես, Հանձնաժողովն առաջնորդվում է անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում գործերի քննությունն ապահովելու, վարույթի մասնակիցներին գործին նյութերին ծանոթանալու, ինչպես նաև լսված լինելու իրավունքների իրացման հնարավորության ապահովման անհրաժեշտությամբ:*

Գործերի առանձնահատկություններով պայմանավորված՝ Հանձնաժողովը համակարգային առումով մեկնաբանում է *օրենսդրական կարգավորումների բովանդակային նշանակությունը, այս առնչությամբ, մասնավորապես, գործում առկա հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերը վերլուծության են ենթարկվում* օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից՝ կիրառվող նորմի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը պահպանելու նպատակով:

Վարույթների արդյունքում պաշտոնատար անձանց նկատմամբ Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումներով և եզրակացություններով հաստատվում են կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից կատարված խախտումները հիմնավորող փաստեր: Նշված վարչարարությունը գործնական առումով զսպող նշանակություն ունի պաշտոնատար անձանց կոռուպցիոն բնույթի հնարավոր հակաիրավական վարքագծի կանխարգելման համար:


2022 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 45 հայտարարագրմանն առնչվող և կարգապահական խախտումների վերաբերյալ վարույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հարուցվել են հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ թվով 30 վարույթներ, ինչպես նաև թվով 15 կարգապահական վարույթներ, որոնք հարուցվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելուն զուգահեռ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 6.1-րդ մասի համաձայն:

Հարուցված 30 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներից թվով 10-ը հարուցվել են սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիր չներկայացնելու խախտումների հիմքով, 19-ը՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով, իսկ 1-ը՝ հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման հիմքերով:




Նշված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներից թվով 20-ը հարուցվել են հանրային պետական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, 3-ը՝ հանրային համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, 3-ը՝ համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, 4-ը՝ հանրային համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց ընտանիքի անդամների նկատմամբ:




Ինչ վերաբերում է կարգապահական վարույթներին, ապա դրանք հարուցվել են Օրենքի 25-րդ հոդվածի 6.1-րդ մասով սահմանված իրավանորմի ուժով՝ ՀՀ վարչական դատարանի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավորների և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի նկատմամբ:

2022 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովը քննել և լուծել է (վարույթը եզրափակել է որոշմամբ) թվով 54 վարույթներ: Նշված գործերից 16-ը հանդիսանում են նախորդ տարվա ընթացքում հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ, 11-ը՝ կարգապահական վարույթներ, իսկ 27-ը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ:





Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ընդունված թվով 1 որոշմամբ հայտարարատու անձի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում վարչական տույժը, իսկ 6-ի նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, որոնցից 4-ի դեպքում հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, իսկ 2-ը՝ օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագրերը չներկայացնելու հիմքով:



Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում եզրափակված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթների արդյունքում Հանձնաժողովը կայացրել է թվով 36 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու վերաբերյալ, որոնցից 24-ը հայտարարագիր չներկայացնելու խախտումների հիմքով հարուցված վարույթներ, իսկ 12-ը՝ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով հարուցված վարույթներ:


Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում հարուցված թվով 15 կարգապահական վարույթներից՝ 11-ի դեպքում կայացվել է կարգապահական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ:

Չեզրափակված մյուս վարույթները հաշվետու ժամանակահատվածում գտնվել են քննության փուլում:

Մասնավորապես, հայտարարագրերը չներկայացնելու խախտումների կապակցությամբ իրականացված վարույթների արդյունքում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը կարճվել են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին վարույթները: Նշված



հանգամանքի պարագայում Հանձնաժողովի կողմից պատճառաբանվել են կայացված որոշումները՝ արձանագրելով, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, այս առնչությամբ էական է համարվել խախտման (արարքի) որակական կողմը, արդյոք այն ունի նվազ նշանակություն, թե ոչ: Նշվածով պայմանավորված՝ մինչև գործի քննության օրը հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը, Հանձնաժողովի գնահատմամբ չի խաթարվել:



Խախտման (արարքի) որակական կողմի, ինչպես նաև նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էության գնահատմամբ է Հանձնաժողովի կողմից իրականացվել վարչարարություն նաև հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու խախտումների կապակցությամբ:

Այսպես, նշված վարույթներով Հանձնաժողովը գործի քննության արդյունքում եզրահանգել է, որ գործով հաստատված հայտարարագրման ենթակա տվյալը հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելը, որպես կատարված իրավախախտումը նվազ նշանակություն ունի, որպիսի պայմաններում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով վարչական մարմինն իրավասու է հայտարարատու անձին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Նման գործերով, մասնավորապես, արարքի նվազ նշանակությունը գնահատելիս հաշվի առնվել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական



անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովելու պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Նշվածով պայմանավորված՝ բոլոր այն դեպքերում, երբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա կոնկրետ տվյալները, որոնք հայտարարատուի կողմից չեն ներկայացվել իր հայտարարագրի (օրինակ՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում») կոնկրետ բաժնում պահանջվող տվյալներում, մինչդեռ, ներկայացված են եղել գույքի հայտարարագրի (օրինակ՝ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում՝ ընդգրկված (տվյալ պարագայում՝ արժեթղթի տեսակի, ձեռք բերելու օրվա, ամսվա, տարվա, եղանակի, արժեքի (գնի, արժույթի, գործարքի մյուս կողմի անվանման, հասցեի վերաբերյալ) տվյալներում, որոնք բովանդակային առումով ընդգրկել են օրենքով պահանջվող այլ բաժնում հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը, Հանձնաժողովի կողմից դիտարկվել են որպես նվազ նշանակություն ունեցող արարքներ:

Հանձնաժողովը նման դեպքերում էական է գնահատել այն, որ հայտարարատու անձի հայտարարագրի այլ բաժնում ներկայացվող տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, այլ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում ինչպես հանրային հաշվետվողականությունը, անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը, այնպես էլ հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի **բացահայտման իրավական հնարավորությունը:**



Վերոնշյալ դիրքորոշումը, մասնավորապես, առանցքային փաստարկ է հանդիսացել նաև դատավորների նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներին զուգահեռ հարուցված կարգապահական վարույթները՝ կարգապահական պատասխանատվության հիմքի բացակայության հիմքով կարճելու համար:

Նշվածի համատեքստում նշենք այն, որ կարգապահական վարույթներում Հանձնաժողովը ևս էական է համարել անդրադառնալ գործի նյութերով հաստատված խախտման որակական կողմին և գտնում է, որ այն պետք է գնահատման ենթարկել օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից, որպեսզի պահպանվի կիրառվող օրենքի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը:

Այս առումով, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովման և պատասխանատվության համաչափության վերաբերյալ դրույթներին: Այսպես, 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17)), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը զարգացող միտում է և նպատակ ունի հասցեագրել շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները (տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Հոդված 11-ի կիրառական ուղեցույց և գնահատման շրջանակ», կետ 44¹):

¹https://www.unodc.org/res/ji/import/programmes_projects_initiatives/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide.pdf



Գույքային դրության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացումը Վենետիկի հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման գործում դիտարկվել է որպես արժեքավոր զենք (տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) CDL-AD(2014)008, 24 մարտի, 2014 կարծիք No. 712 / 2013): Կարևորելով ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը՝ Վենետիկյան հանձնաժողովն անդրադարձել է նաև ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարման դեպքում **պատասխանատվությանը և դրա համաչափությանը**: Ըստ Վենետիկյան հանձնաժողովի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար, սակայն հայտարարագիր չներկայացնելը բավարար լուրջ խախտում է, և կարող է հանգեցնել պաշտոնից ազատման (Վենետիկյան հանձնաժողով CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

Նշվածից հետևում է, որ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ **հայտարարագրման պարտավորությունը ծառայում է կոռուպցիան զսպելու նպատակին**՝ բացառելու համար շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները, իսկ այն դեպքերում, երբ առկա է հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ, որոնցով չի խաթարվում հայտարարագրման պարտավորության բուն նպատակը, **պատասխանատվությունը բացառվում է**:

2021 թվականին հարուցված **թվով 4** վարչական իրավախախտումների **գործերի** վերաբերյալ վարույթների նյութերը վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագրերը Հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու ենթադրյալ հանցագործության դեպքերի առթիվ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում ներկայացվել են **ՀՀ գլխավոր դատախազություն**:

2.2 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով մեկ օրենսդրական նախաձեռնություն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի



Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի տեսքով: Նշված փաթեթի մասով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

✓ Հանձնաժողովի անդամների մասնակցությամբ իրականացվել են թվով երկու քննարկումներ

✓ կատարվել են բովանդակային և տեխնիկական բնույթի խմբագրական աշխատանքներ

✓ 2022 թվականի ապրիլի 25-ի թիվ Ե-01/780-2022 գրությամբ նշված օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ շրջանառելու նպատակով:

✓ ՀՀ արդարադատության նախարարի՝ 2022 թվականի մայիսի 13-ի թիվ Մ-1904-2022, հունիսի 7-ի թիվ Մ-2427-2022 և հունիսի 9-ի թիվ Մ-2498-2022 գրություններին կից ստացվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից Արդարադատության նախարարություն ներկայացված կարծիքները և առաջարկությունները, որոնք ուսումնասիրվել են:

✓ Շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների և առաջարկությունների վերաբերյալ կազմվել է ամփոփաթեթի նախագիծ, որը ներկայում գտնվում է լրամշակման փուլում:

2.3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում այլ պետական մարմինների կողմից Հանձնաժողովի կարծիքի են ներկայացվել օրենսդրական փոփոխություններ և լրացումներ նախատեսող հետևյալ նախագծերը՝

ՀՀ արդարադատության նախարարությունից՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, «Հայաստանի Հանրապետության վարչական



իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ, ««Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը և նախագծերի հիմնավորումը, **«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և Կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշման հավելվածով նախատեսված նախագծի ընդունման հիմնավորումը, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը և Կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշման հավելվածով նախատեսված նախագծի ընդունման հիմնավորումը,

ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովից՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ,

ՀՀ վիճակագրական կոմիտեից՝ «Վարչական իրավախախտումների մասին» Ձև 1-ՎԻ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 50-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշման նախագիծ:

Նշված նախագծերի փաթեթներն ուսումնասիրվել են, Հանձնաժողովի կողմից առաջարկություններ և դիտարկումներ չեն ներկայացվել:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառվող **«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող լրացումներին զուգահեռ** Հանձնաժողովի կողմից առաջարկվել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում Հանձնաժողովի լիազորություններին վերաբերող իրավանորմում՝ 37-րդ հոդվածի 7-րդ մասում նույնպես կատարել լրացումներ: Այդ



կապակցությամբ մշակվել և Արդարադատության նախարարությանն է ներկայացվել լրացում նախատեսող նախագիծը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախագծով, մասնավորապես, առաջարկվել է սահմանել հետևյալ իրավակարգավորումները.

✓ **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներով սահմանված կարգով վարչական վարույթը կասեցվելու կամ երկարաձգվելու դեպքում կասեցման կամ երկարաձգման ժամկետները չհաշվարկել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված վարչական տույժ նշանակելու ժամկետի մեջ:**

✓ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կարող է կասեցվել կամ երկարաձգվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով, ինչպես նաև առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանող օրենքներով նախատեսված դեպքերում և ժամկետներով»:

«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել է հետևյալ առաջարկությունը.

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-48-Ն օրենքով նախատեսված փոփոխություններով **«Պետական կառավարչական հիմնարկների մասին»** օրենքը խմբագրվել է և վերնագրվել **«Համայնքային կառավարչական հիմնարկների մասին»** վերտառությամբ օրենքով, որով **պետական հիմնարկների կարգավիճակը սահմանող իրավակարգավորումներ այլևս առկա չեն:**

Վերոնշյալից կարելի է եզրահանգել, որ սույն փոփոխությունից հետո **պետական հիմնարկներ** այլևս չեն գործում, ուստի նաև առարկայազուրկ է Կառավարությանը լիազորել սահմանելու պետական կառավարման համակարգի մարմինների կազմում գործող՝ ծրագրեր իրականացնող պետական հիմնարկի օրինակելի կանոնադրության ձևը:

ՀՀ **ոստիկանությունից՝** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի թիվ 654-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի N 654-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ ներկայացվել է հետևյալ կարծիքը.



«Նախագծի 2-րդ կետով օգտագործվող հիմնական հասկացությունների շարքում սահմանված են տեղեկություն հայցող և տրամադրող մարմինների հասկացությունները, համաձայն որոնց ընդլայնվել է տեղեկություն հայցող և տրամադրող մարմինների շրջանակը, որոնց մեջ Հանձնաժողովը ևս ներառված է:

Մինչդեռ Նախագծով նախատեսված դրույթների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ տեղեկություն հայցելու պարագայում Նախագծով սահմանվում են այնպիսի պահանջներ, որոնց բավարարումն անհնար է Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթի իրավազրույթյան շրջանակներում, մասնավորապես Նախագծի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տեղեկություն հայցողի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի) հարցումը ձևակերպվում է տպագիր և պետք է պարունակի քրեական վարույթը նախաձեռնող կամ օպերատիվ հաշվառման գործը կազմող մարմնի անվանումը, քրեական վարույթը նախաձեռնելու կամ կազմելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, գործի համարը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածը, որով նախաձեռնվել է քրեական վարույթը:

Նշված պայմաններին բավարարող հայցում ներկայացնելը Հանձնաժողովի կողմից գործնականում անհնար է, համապատասխան անհրաժեշտ տեղեկատվությանը օբյեկտիվորեն չտիրապետելու հիմնավորմամբ:

Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է բյուրոյի տվյալների պահոց հասկացությունը, համաձայն որի՝ բյուրոյի տվյալների պահոցը բյուրոյի գործունեության ընթացքում Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (այսուհետև՝ Ինտերպոլ) և դրա անդամ պետությունների իրավապահ մարմինների, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում հանցագործությունների մասին կուտակված տեղեկությունների դասակարգված ամբողջությունն է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով սահմանված պետական կառավարման մարմինների համակարգում ընդգրկված չէ և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի իմաստով հանդիսանում է ինքնավար պետական մարմին:

Նախագծի 3-րդ կետով սահմանված է տեղեկության տրամադրման նպատակը, այն է՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններին աջակցելը՝ քրեական վարույթում և օպերատիվ հաշվառման գործում ներգրավված անձանց հետախուզելու, նույնականացնելու, ինչպես նաև միջազգային բնույթի հանցագործությունները կանխելու, նախականիլու, հայտնաբերելու և բացահայտելու համար, մինչդեռ օրենքով Հանձնաժողովին հանցավորության դեմ պայքարի անմիջական գործառույթ վերապահված չէ:



Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրել ենք վերանայել Հանձնաժողովի՝ Նախագծով սահմանված սուբյեկտների ցանկում ներառելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը և Հանձնաժողովի կողմից գործնականում նշված կարգի կիրառման հնարավորությունը»:

2.4 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2022 թվականի **1-ին կիսամյակի ընթացքում** քաղաքացիների (փաստաբանների), պետական մարմինների, զանգվածային լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների կողմից Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից, գրություններից, հարցումներից **48-ը (31-ը՝ քաղաքացիներից, 12-ը՝ պետական մարմիններից, 5-ը՝ կազմակերպություններից)** մակագրվել են *վարչությանը*, որոնց ուսումնասիրության արդյունքում դրանցում բարձրացված հարցերի բովանդակությամբ պայմանավորված՝ իրականացվել են հետևյալ գործողությունները.

Հանձնաժողովին հասցեագրված *քաղաքացիների կողմից* թվով **5 դիմում-բողոքներ**, որոնցով բարձրացված հարցերը վերաբերել են կոնկրետ դատական գործերով կայացված դատական ակտերի առնչությամբ դատավորների կողմից դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտումներին, Հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել են **Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով**, իսկ այլ մարմինների իրավասություններին վերաբերող հարցեր պարունակող *քաղաքացիների թվով 4* դիմումներ վերահասցեագրվել են իրավասու վարչական մարմիններ:

Հանձնաժողովին հասցեագրված հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող *քաղաքացու և տեղական ինքնակառավարման մարմնի* կողմից **թվով 6 դիմում-բողոքներ** ներկայացվել են **ՀՀ գլխավոր դատախազություն**:

Հանձնաժողովի կողմից դիմում-բողոքներն իրավասու այլ մարմիններ վերահասցեագրվելու պարագայում այդ մասին ծանուցվել են *բոլոր դիմումատու անձինք*՝ միաժամանակ վերջիններիս է ներկայացվել նաև գրավոր հիմնավորում իրենց դիմումով ներկայացված հարցի՝ Հանձնաժողովին վերապահված գործառույթների շրջանակից դուրս լինելու վերաբերյալ:



Հանձնաժողովը հասցեագրված **թվով 3** դիմումներում, հարցումներում, գրություններում հիմնականում բարձրացվել են Հանձնաժողովի կողմից իրականացվող գործառույթների շրջանակում կիրառվող կոնկրետ իրավանորմերի բովանդակության պարզաբանման վերաբերյալ հարցեր, որոնց վերաբերյալ տրամադրվել են գրավոր պարզաբանումներ: Հանձնաժողովին հասցեագրված **6** դիմում-հաղորդագրությունները վերադարձվել են՝ օրենքով իրավասու վարչական մարմիններին հասցեագրվող դիմումին ներկայացվող պահանջները չպահպանելու և Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից դուրս լինելու հիմքերով:

2.5 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Վարչության կողմից շարունակական իրավական աջակցություն է տրամադրվել Հանձնաժողովի այլ մասնագիտական ստորաբաժանումներին, որոնց շրջանակում, մասնավորապես գրավոր իրավական դիրքորոշումներ են ներկայացվել բարձրացված հարցերի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում առանցքային է դիտարկվում, մասնավորապես հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից մշակվող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ տրամադրված իրավական աջակցությունը:

Այսպես, վարչությունն իրավական ապահովում է իրականացրել Հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնին, մասնավորապես ուսումնասիրվել են Հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթները: Մասնակցություն է ապահովվել Հանձնաժողովի անդամների կողմից նշված օրենսդրական փաթեթների քննարկմանը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքից բխող մի շարք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի մշակմանը:

Սահմանված կարգով պաշտոնական հրապարակման են ներկայացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N 03-Ն², 2022 թվականի հունիսի 17-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշումը աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164739>



պահանջները սահմանելու մասին» N 02-Ն³, ինչպես նաև 2022 թվականի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն⁴ որոշումները:

Վարչության կողմից մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծը:

3. ԿՐԹԱԿԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

3.1 ՆՊԱՏԱԿԻՑ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը ձևավորվել է 2021 թվականի հունվարի 18-ին համաձայն Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 01-Ա հրամանի⁵: Վարչության ստեղծման հիմքում ընկած է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերով հանձնաժողովին պատվիրակված լիազորությունների իրականացման ապահովումը: Համաձայն այդ լիազորության՝ Հանձնաժողովը պետք է մշակի կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացման ծրագրեր, իրականացնի միջոցառումներ, առաջարկություններ ներկայացնի կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման համար տրամադրի ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր:

Հանձնաժողովին կրթական, հանրային իրազեկվածության բարձրացման լիազորության պատվիրակումն էլ իր հերթին բխում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրից⁶, որտեղ հակակոռուպցիոն

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164524>

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164523>

⁵ ԿԿՀ գլխավոր քարտուղարի 01-Ա հրաման, 2021 թվականի հունվարի 18, <http://cpcarmenia.am/files/legislation/362.pdf>

⁶ Հայաստանի Հանրապետության կառավարության n 1332-Ն որոշում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը եվ դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների



կրթությունը և իրազեկումն առանձնացված է որպես հակակոռուպցիոն ռազմավարության 3 հիմնական ուղղություններից մեկը: Հակակոռուպցիոն կրթական և իրազեկման տարբեր ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը բխում է մինչ այդ վերջիններիս ոչ լայնածավալ և համակարգված բնույթով, անհրաժեշտ արդյունավետության բացակայությամբ: Իրավիճակային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիները շատ հաճախ տեղյակ չեն իրականացված բարեփոխումներից, որի արդյունքում չեն օգտվում դրանցից, ինչն էլ իր հերթին հանգեցնում է իրականացրած քայլերի ինքնանպատակ դառնալուն և անարդյունավետությանը:

Ռազմավարությունում առաջարկվում է նաև շարունակական քայլեր ձեռնարկել հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթության տրամադրման հարցում: Ընդ որում, կառուցակարգային հարցերի լուծման նպատակով առաջարկվում է հակակոռուպցիոն կրթության իրականացման գործառույթը վերապահել Հանձնաժողովին՝ վերջինիս համար սահմանելով կրթական ծրագրերի, ուղեցույցների, պարբերական խորհրդատվական զեկույցների մշակման և հրապարակման պարտականություն:

Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի իրականացման վարչության լիազորություններն անմիջականորեն կապված են նաև միջազգային և ներպետական ռազմավարական փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորությունների հետ: 2007 թվականին Հայաստանը, վավերացնելով Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), ստանձնեց Կոնվենցիայի պահանջների իրականացման պարտավորություն, որում ևս անդրադարձ է կատարվում հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկվածության բարձրացման խնդիրը: Համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի «յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքներն ընդլայնելը և տարածելը»⁷: Կոնվենցիայի այլ հոդվածներով ևս անդրադարձ է կատարվում հակակոռուպցիոն կրթությանը և հանրային իրազեկվածության ծրագրերին, որոնցով ամրագրվում է հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար ծրագրերի իրականացման

⁷ Միավորված ազգերի կազմակերպության կոռուպցիայի դեմ կոնվենցիա, ՀՀ-ի կողմից վավերացրված 07.04.2007, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>



(հոդված 13, 1-ին մաս) պետության պարտավորությանը: Այդ համատեքստում հատկապես կարևորվում է հանրության տեղեկացվածության միջոցառումների իրականացումը, որոնք կնպաստեն կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը, ինչպես նաև պետական կրթության ծրագրեր իրականացնելը, ներառյալ ուսումնական ծրագրերը դպրոցներում և համալսարաններում (հոդված 13, 1-ին մաս, գ կետ): Այսպիսով՝ Կոնվենցիան կարևորում է հանրային իրազեկման տարբեր արշավների իրականացումը, հակակոռուպցիոն կրթության տարածումը, կրթական ծրագրերի մշակումը, որը պետք է իրականացնի պետական այլ գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների, ոլորտային մասնագետների և կրթական հաստատությունների հետ համագործակցությամբ: Կարևորվում է նաև հասարակության ավելի աղքատ հատվածներին կրթելուն ուղղված հատուկ ջանքերը, քանի որ նրանք հաճախ անհամաչափորեն տուժում են կոռուպցիայից: Իրազեկման արշավները պետք է հստակ բացատրեն, թե ինչ է կոռուպցիան, հասցրած վնասը, արգելված վարքագծի տեսակները և ինչ է պետք անել դրա դեմ պայքարելու համար⁸: Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020» վիճակագրական-վերլուծական զեկույցի՝ ՀՀ բնակչության շուրջ 26.4%-ը համարվում է աղքատ, որոնցից 1.4 %-ը՝ ծայրահեղ աղքատ⁹: Այսպիսով՝ կոռուպցիայի հետևանքներից անհամաչափորեն տուժում է հայաստանյան բնակչության ավելի քան մեկ քառորդը, որն էլ ավելի է բարձրացնում աղքատ բնակչության շրջանում հակակոռուպցիոն իրազեկման արշավների իրականացման կարևորությունը:

Կոռուպցիայի կանխարգելման մանդատի ներքո հակակոռուպցիոն կրթության խիստ կարևորության մասին է խոսում նաև հակակոռուպցիոն գործակալությունների (ՀԿԳ) նախկին և ներկա ղեկավարների, հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվողների և մասնագետների կողմից 2012թ. նոյեմբերի 27-ին ընդունված Զակարտայի հայտարարությունը, որտեղ, մասնավորապես ասվում է՝ «ՀԿԳ-ները պետք է ունենան կանխարգելման, ուսուցումների, իրազեկվածության բարձրացման, հետաքննության և հետախուզության միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի հստակ լիազորություններ՝ մեկ կամ մի քանի համակարգվող գործակալությունների միջոցով»¹⁰:

⁸ UNODC, TECHNICAL GUIDE TO THE UNITED NATIONS CONVENTION AGAINST CORRUPTION, New York, 2009, page 62, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/TechnicalGuide/09-84395_Ebook.pdf

⁹ ՀՀ վիճակագրական կոմիտե «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020» վիճակագրական-վերլուծական զեկույց, 2020 թվական, էջ 33 https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf

¹⁰ Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Զակարտայի հայտարարություն, Զակարտա, 2012թ. Նոյեմբերի 26-27, էջ 2, <https://armla.am/wp-content/uploads/2019/01/jakarta-statement-2012.pdf>



Լինելով ՀՀ հակակոռուպցիոն իրազեկման բարձրացման արշավների և կրթական ծրագրերի իրականացման պատասխանատու գերատեսչությունը՝ Վարչության աշխատանքին են առնչվում ոլորտային միջազգային կազմակերպությունների ներկայացրած առաջարկները և ստանձնած պարտավորությունների շրջանակում հաստատված չափանիշները: Հայաստանը, հանդիսանալով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մասնակից երկրներից, ծրագրի իրականացման ընթացքը դիտարկելու նպատակով անցնում է մշտադիտարկումներ և ստանում առկա վիճակը բարելավելու ուղղված առաջարկություններ: 4-րդ մոնիթորինգային փուլի արդյունքում մշակված զեկույցում¹¹ Հայաստանին ներկայացվել է հանրային իրազեկվածության բարձրացման և կրթությանն առնչվող առաջարկություն (Առաջարկություն N2)¹², որում առաջարկվում է՝

- Ներգրավել քաղաքացիական հասարակությանը և ավելի լայն հանրությանը կոռուպցիայի դեմ իրազեկման աշխատանքներում:
- Իրականացնել իրազեկվածության բարձրացման աշխատանքներ՝ հիմնվելով հաղորդակցման համապարփակ ռազմավարության վրա: Գործողություններում թիրախավորել կոռուպցիային առավել հակված ոլորտները և կիրառել տարբեր մեթոդներ և գործողություններ՝ հարմարեցված յուրաքանչյուր թիրախային խմբին:
- Բավարար ռեսուրսներ հատկացնել իրազեկման բարձրացման միջոցառումներին, գնահատել արդյունքներն ու ազդեցությունը և համապատասխանաբար պլանավորել իրազեկման բարձրացման հաջորդ փուլը:
- Տրամադրել հակակոռուպցիոն կրթություն կրթական գործընթացի տարբեր մակարդակներում:

Այսպիսով՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տված առաջարկությունը ևս փաստում է հանրային լայն իրազեկման արշավների, կրթական ծրագրերի իրականացման կարևորությունը, որոնք կիրականացվեն պետական գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների ներգրավման միջոցով՝ թիրախավորելով կոռուպցիայի առավել հակված ոլորտները: Պայմանավորված այն հանգամանքով, որ հայ հանրության շրջանում կոռուպցիայի ընկալման, կոռումպացված ոլորտների/ծառայությունների բացահայտմանն ուղղված հետազոտությունները

¹¹ ISTANBUL ANTI-CORRUPTION ACTION PLAN FOURTH ROUND OF MONITORING, 21 March 2019, <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Progress-Update-2019-ENG.pdf>

¹² ISTANBUL ANTI-CORRUPTION ACTION PLAN FOURTH ROUND OF MONITORING, 21 March 2019, page 10, <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Progress-Update-2019-ENG.pdf>



գրեթե բացակայում են՝ առաջանում է խնդիր առավել կոռումպացված ոլորտների բացահայտման և հասցեական աշխատանքներ իրականացնելու հետ կապված: Այդ նպատակով 2021 թվականին հոկտեմբերին Հանձնաժողովի առաջարկությամբ, ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ կազմակերպվեց հայ հասարակության շրջանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային ընկալումների բացահայտմանն ուղղված հարցում, որի արդյունքները վերլուծվեցին և Հանձնաժողովին ներկայացվեցին 2022 թվականի հունիսին՝ հնարավորություն ընձեռելով տվյալահեն մոտեցմամբ ընտրել թիրախային խմբերը և պլանավորել հանրային իրազեկման արշավները:

Այսպիսով, ներպետական և միջպետական ստանդարտները, նորմերը, փաստաթղթերը և առաջարկությունները խիստ կարևորվել են Վարչության աշխատանքների պլանավորման և հիմնական թիրախային ուղղությունների ընտրման հարցում, քանի որ դրանց իրականացումն օբյեկտիվորեն հնարավորություն կընձեռի հայ հասարակության շրջանում բարձրացնել կոռուպցիայի, կոռուպցիոն դրսևորումների մասին իրազեկվածության մակարդակը, ձևավորել անհանդուրժող վերաբերմունք կոռուպցիայի նկատմամբ և երկարաժամկետ հեռանկարում նպաստել կոռուպցիոն դեպքերի նվազմանը և բարեվարք վարքագծի դրսևորմանը հայ հասարակության շրջանում:

3.2. ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի վավերացմամբ և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում աշխատանք ծավալող միջազգային մի շարք կազմակերպություններին անդամակցելով՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է կոռուպցիայի դեմ պայքարի պարտավորություն, որի մեջ առանձնահատուկ կարևորվում է հանրային իրազեկվածության բարձրացման և կրթական միջոցառումների իրականացում: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում կրթական հանրային իրազեկվածության բարձրացման և կրթական միջոցառումների իրականացման աշխատանքները 3 հիմնական ուղղություններից է, որով ևս մեկ անգամ կարևորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործով մասնագիտացված կառույցների կամքը կոռուպցիայի նկատմամբ 0 հանդուրժողականություն ունեցող հասարակություն ձևավորելու գործում: Հանձնաժողովին պատվիրակված լիազորությունների տեսանկյունից՝ այդ աշխատանքների հիմնական համակարգողը և իրականացնողը Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունն է:



3.3 ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆԵՐՔՈՒՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովին տրված լիազորությունների շրջանակում Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը 2022 թվականի առաջին կիսամյակում իրականացրել է հակակոռուպցիոն կրթական ծրագրերի միջազգային փորձի ուսումնասիրություն, կազմակերպել է աշխատանքային քննարկումներ և միջազգային համաժողովներ, աջակցել է հանրային ծառայողների շրջանում հարցման կազմակերպմանը և մի շարք այլ աշխատանքներ:

Միջազգային փորձին ծանոթանալու և Հայաստանում այն տեղայնացնելու հնարավորությունը քննարկելու նպատակով Վարչությունը նախաձեռնել է ՄԱԿ-ի GRACE նախաձեռնության հետ համագործակցությունը¹³, որի հետ ձևավորվել է համագործակցային միջավայր և պատրաստակամություն՝ աջակցելու Հայաստանում կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերի կազմման և արդիականացման աշխատանքներին: Համագործակցության շրջանակներում վարչությանն է տրամադրվել հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար ուսումնառական նյութեր, նախադպրոցական և կրտսեր դպրոցական երեխաների համար նախատեսված մուլտֆիլմեր և այլ ուսումնամեթոդական նյութեր: Վարչության կողմից ուսումնասիրվել է ներկայացված գրականությունը և ուսումնամեթոդական նյութերը, որոնց հիման վրա կազմվել է ծնողների շրջանում վերապատրաստման կազմակերպման բովանդակության նախագիծ:

Վարչության կողմից զգալի աշխատանքներ են տարվել հակակոռուպցիոն կրթության գործում միջազգային մեծ հեղինակություն վայելող Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի ([International Anti-Corruption Academy](https://www.ica-international.org/)) (IACA) հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: 2022 թվականի մարտի 29-ին ստորագրված համագործակցությամբ հուշագրով¹⁴ ամրագրվեց Հանձնաժողովի և IACA հետ համագործակցությունը, որը նոր խթան հանդիսացավ երկու կառույցների համագործակցության համար: Համագործակցությունը IACA հետ իրականացվում է երեք ուղղություններով՝ հայաստանյան բուհերում հակակոռուպցիոն առարկայական ծրագրերի մշակմանն աջակցություն, ԿԿՀ աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանն աջակցություն, ՀՀ հանրային ծառայողների շրջանում վերապատրաստումների

¹³ [Global Resource for Anti-Corruption Education and Youth Empowerment](https://www.ica-international.org/)

¹⁴ <https://drive.google.com/file/d/1xbPDP7ZlwqVsnALvAUyIj7d400bpf413/view>



կազմակերպմանն աջակցություն: Այս պահին ևս նշված ուղղություններով համագործակցությունը շարունակվում է:

Հաշվետու ժամանակահատվածում Վարչության կողմից իրականացվել են իրազեկման միջոցառումներ, կազմակերպվել տարբեր աշխատաժողովներ.

✓ Կազմակերպվել է «Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերով ավելի քան 60 կազմակերպիչների մասնակցությամբ [աշխատաժողով](#):



✓ ԵՄ/ԵԽ գործընկերություն հանուն լավ կառավարման II ծրագրի շրջանակում կազմակերպվել է «Բարեվարքությունը և Կոռուպցիայի կանխարգելումը» թեմայով բարձր մակարդակի [աշխատաժողով](#), որին



մասնակցել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները, ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների (ԳՐԵԿՈ) գործադիր քարտուղարը (առցանց), ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներ և միջազգային փորձագետներ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, քաղաքացիական

հասարակության ներկայացուցիչներ, կառավարման համակարգի բարեվարքության հարցերով կազմակերպիչներ:

✓ Կազմակերպվել է [աշխատանքային քննարկում](#) Հայաստանում գործող դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մասնակցությամբ: Քննարկմանը հրավիրվել էին Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններ, միջազգային կառույցների ու մեր երկրում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:





✓ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ նախաձեռնությամբ և վարչության աջակցությամբ կազմակերպվել է Վանաձորի բուհերի և քոլեջների մի խումբ ուսանողներ [ճանաչողական այց](#) Կոռուպցիայի կանխարգելման



հանձնաժողով՝ նպատակ ունենալով նաև այս կերպ երիտասարդներին ծանոթացնել մեր երկրում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը և ծրագրերին:

✓ 2022թ. ապրիլի 19-ին Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովի

և Համաշխարհային Բանկի կառավարման գլոբալ [պրակտիկայի](#) միջև կնքվել է փոխըմբռնման [հուշագիր](#)¹⁵: Այն նպատակ ունի ձևավորելու համագործակցության շրջանակ ԿԿՀ-ի և ՀԲ-ի միջև, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել «Հանրային հատվածի հաշվետվողականության շրջանակային գնահատում» խորագրով հետազոտություն:

✓ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և մյուս պետական մարմիններին՝ ՀՀ պետական կառավարման համակարգում կոռուպցիայի պատճառները, օրինաչափություններն ու հետևանքները համակողմանիորեն գնահատելու գործընթացում օժանդակելու նպատակով՝ Հանձնաժողովի և Համաշխարհային բանկի համագործակցությամբ իրականացվել է հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ [հարցախույզ](#): «Հանրային հատվածի հաշվետվողականության գնահատում» անանուն հարցման նպատակն էր ստանալ Հայաստանի հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի պատճառների, եղանակների և հետևանքների ընկալման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն: Ակնկալվում է, որ հարցումը կաջակցի Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների և առաջնահերթությունների հետագա սահմանմանը՝ տրամադրելով առկա իրավիճակի մասին տեղեկատվություն: Հարցումը հանդիսանում է Համաշխարհային Բանկի՝ Հանրային ծառայողների գլոբալ հետազոտության (GSPS) նախաձեռնության մաս, որի նպատակն ամբողջ աշխարհում պետական հաստատությունների հանրային ծառայողներից հետազոտական տվյալներ ստանալն է:

¹⁵ https://drive.google.com/file/d/1QJJWK0coUgKxKeV7PoAIGU_xCRqBqIgT/view



✓ Հաշվետու ժամանակահատվածում Վարչությունը հանրության շրջանում ակտիվորեն լուսաբանել է Հանձնաժողովի գործունեությունը, կազմակերպել հարցազրույցներ հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացված աշխատանքները հանրությանը ներկայացնելու նպատակով: Եթե հունվար ամսվա ընթացքում հանրության շրջանում Հանձնաժողովի մասին տեղեկատվությունը տարածվում էր բացարձակապես պաշտոնական կայքի և մեկ սոցիալական մեդիայի (Facebook) օգտագործման միջոցով, ապա 2022 թվականի հունիսին տեղեկատվությունը տարածվում էր նաև Հանձնաժողովի՝ Youtube-ում և Telegram-ում բացված հաշիվներով:



✓ Հաշվետու ժամանակահատվածում յուրաքանչյուր աշխատանքային օր առավոտյան և երեկոյան պարբերականությամբ իրականացվել է ավելի քան 17 էլեկտրոնային մամուլի ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել են կատարված մամուլի մոնիթորինգի մասին ամփոփ տեղեկանքներ:

✓ Հաշվետու ժամանակահատվածում Վարչությունն ակտիվ լուսաբանել է Հանձնաժողովի աշխատանքները, կազմակերպել հարցազրույցներ և տրամադրել օժանդակություն թեմատիկ տեսանյութերի ստեղծմանը:

✓ 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վարչության աշխատակիցները մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով մասնակցել են տարաբնույթ [դասընթացների՝](#) այդ թվում ԲՀՀ-ի կողմից կազմակերպված «Ապօրինի գույքի նույնականացում» թեմայով վերապատրաստմանը, IRZ-ի կողմից կազմակերպված «Կրթական ծրագրերի կազմման առանձնահատկությունները», «Հանրային գնումների գործընթացի կոռուպցիոն ռիսկերը» վերապատրաստումներին և այլն:

✓ Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել «Հայաստանում բարեվարքության խթանում և հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելում» ԵՄ ԹՎիննինգ ծրագրի հանրային իրազեկվածության բարձրացման և հակակոռուպցիոն կրթության կազմակերպման գործընթացին առնչվող բաղադրիչների շրջանակներում հետագա աշխատանքները պլանավորելու ուղղությամբ:

3.4 ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

✓ Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի հետ համագործակցության շրջանակում Հանձնաժողովի հետ կնքվել է փոխըմբռնման



հուշագիր, տեղի է ունեցել երկու հանդիպում-քննարկումներ հանձնաժողովի ներկայացուցիչների և IACA-ի ներկայացուցիչների հետ, մշակվել են համագործակցության շրջանակում պլանավորվող դասընթացների, առարկայական ծրագրերի վերաբերյալ ԿԿՀ դիտարկումները և ներկայացվել IACA-ին, ինչպես նաև ստացվել է պլանավորվող աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բյուջեի նախահաշիվը:

✓ ՄԱԿ-ի GRACE նախաձեռնության հետ համագործակցության շրջանակում ստացվել է հրավեր IACA-ի և UNODC-ի կազմակերպած «Միջազգային հակակոռուպցիոն ամառային դպրոց ուսանողների և երիտասարդների համար» մեկշաբաթյա վերապատրաստման ծրագրին հայ երիտասարդներին մասնակից դարձնելու վերաբերյալ: Հրավերը Հանձնաժողովի կողմից տարածվել է հայաստանյան բոլոր բուհերի¹⁶¹⁷ և [ԿԳՄՍ նախարարության](#) շրջանում, որի արդյունքում հայ 8 երիտասարդներ հնարավորություն ստացան մասնակցել վերապատրաստմանը:

✓ 2022 թվականի հունիսի դրությամբ հանձնաժողովի մասին տեղեկատվությունը տարածվում էր պաշտոնական կայքի, Facebook-ում, Youtube-ում և Telegram-ում բացված հաշիվների միջոցով: Telegram-ում բացված Հանձնաժողովի հաշվին հետևում են 76, Facebook՝ 2400-ից ավելի, Youtube 39 օգտատերեր:

Page Overview

Followers: 2,414

	Post Reach	11,381
	Post Engagement	4,823
	New Page Likes	44
	New Page Followers	44


✓ Մամուլի մոնիթորինգի մասին յուրաքանչյուր աշխատանքային օր առավոտյան և երեկոյան պարբերականությամբ կազմվել են ամփոփ տեղեկանքներ: Կազմված տեղեկանքների վիճակագրությանը կարող եք ծանոթանալ ստորև.

¹⁶


https://brusov.am/hy/announcement/mijazgayin_hakakorupcion_amarayin_dproci_masnakcutyan_hraver/#sthash.1mhCHq5L.dpbs

¹⁷ <https://shsu.am/international-anti-corruption-summer-school-for-students-and-young-people/>

¹⁸ <https://www.armedu.am/index.php/am/events/view/531>



✓ Հաշվետու ժամանակահատվածում Վարչությունն ակտիվ լուսաբանել է Հանձնաժողովի աշխատանքները, որի ուղղությամբ իրականացված աշխատանքներին մանրամասն կարող եք ծանոթանալ ստորև ներկայացվող գծապատկերից.



✓ ԿԿՀ-ի և ՀԲ-ի միջև համագործակցության շրջանակում իրականացվել է «Հանրային հատվածի հաշվետվողականության շրջանակային գնահատում» խորագրով հետազոտություն, որին մասնակցել է 3078 հանրային ծառայող ՀՀ 50 պետական գերատեսչություններից:

✓ Հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից մշակվել է «Բարեվարքության շաբաթ» հանրային իրազեկման բարձրացման արշավի ծրագրի նախագիծը:



✓ Հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից կազմակերպվել է 2 բարձր մակարդակի համաժողով, 1 դոնորների հետ հանդիպում և 1 վերապատրաստում նախատեսված բարեվարքության կազմակերպիչների համար:

✓ «Հայաստանում բարեվարքության խթանում և հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելում» ԵՄ ԹՎԻՆՆԻՆԳ ծրագրի հանրային իրազեկվածության բարձրացման և հակակոռուպցիոն կրթության բաղադրիչների աշխատանքները պլանավորելու նպատակով Վարչության աշխատակիցները մասնակցել են 9 հանդիպում-քննարկումների, կազմել և ծրագրի հայաստանյան ներկայացուցչին են ներկայացրել վարչության կարիքները և ծրագրից ակնկալվող օժանդակությունը:

3.5 ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հանձնաժողովի իրականացրած գործողությունների մասին տեղեկատվության տարածումը հանրության շրջանում հնարավորություն է տալիս հանրությանը հաղորդակից դարձնել կոռուպցիայի դեմ պայքարի/կանխարգելման շրջանակներում Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումներին, վստահություն ձևավորել պետական մարմինների նկատմամբ, ինչպես նաև տեղեկացնել սպասվող փոփոխությունների և առկա խնդիրների մասին: Այդ համատեքստում հատկապես կարևորվում է հաշվետու ժամանակահատվածում ԿԿՀ աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպված 15 հարցազրույցները, որոնց լայն լուսաբանումը հնարավորություն տվեց բարձրացնելու Հանձնաժողովի մասին իրազեկվածության մակարդակը հայ հասարակության շրջանում:

Վարչության համար հատկապես կարևորվում է 2022 թվականին կազմակերպված բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստումը, որը նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 11-րդ գործողության պահանջ էր հանդիսանում: ՀՀ պետական համակարգում կայացած և բանիմաց բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի առկայությունն էապես կընդլայնի բարեվարք հանրային ծառայողների քանակը պետական գերատեսչություններում, կվերահսկի վարքագծի կանոնների պահպանումը հանրային ծառայողների շրջանում: Բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար նախատեսված վերապատրաստումը հնարավորություն ընձեռեց նաև վերհանել առկա խնդիրները, ինչպես նաև հիմք հանդիսանալ նրանց հետ հետագա համագործակցության: Նրանց հետ



համագործակցությունը շարունակվեց նաև ԿԿՀ-ի և ՀԲ-ի միջև



համագործակցության շրջանակում իրականացված «Հանրային հատվածի հաշվետվողականության շրջանակային գնահատում» հարցման շրջանակում:

Արդյունքում ստեղծվեց բարելավարքության կազմակերպիչ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով անմիջական կապ,

որն էապես օգնում է բարելավարքության կազմակերպիչների մոտ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ առաջացած հարցերն ու խնդիրներն արագ կարգավորելու գործում:

2022 թվականի մայիս-հունիս ամիսներին ԿԿՀ-ի և ՀԲ-ի միջև համագործակցության շրջանակում իրականացված «Հանրային հատվածի հաշվետվողականության շրջանակային գնահատում» [հարցումը](#), որը Հանձնաժողովին և ՀՀ պետական այլ գերատեսչություններին տեղեկատվություն կտրամադրի հանրային ծառայողների շրջանում կոռուպցիայի ընկալման, կադրերի հավաքագրման և կառավարման, աշխատանքի արդյունավետության գնահատման, աշխատանքի արդյունավետության հետ կապված պարզևատրումների, հաշվետվողականության և թափանցիկության, բողոքների հասցեագրման մեխանիզմների, գնումների գործընթացում և այլ ոլորտներում առկա խնդիրների մասին: Այն կօգնի ճիշտ թիրախավորել առկա խնդիրները և ըստ դրա կազմակերպել աշխատանքները՝ նպաստելով Հայաստանի պետական համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Վարչության կողմից կազմակերպված բարձր մակարդակի [համաժողովները](#)

հարթակ հանդիսացան պետական կառավարման և միջազգային կառույցների բարձրաստիճան պաշտոնյաների համար ոլորտային խնդիրները քննարկելու, նոր լուծումներ գտնելու, վարքագծի կանոնների տեղայնացման և կիրառման մի շարք հարցեր քննարկելու համար: Ներառական և մասնակցային որոշումների կայացումը նպաստում է որոշման կյանքի կոչելու արդյունավետության վրա, ուստի բարձր մակարդակի նման միջոցառումների կազմակերպումը կնպաստի բարձրաստիճան





պաշտոնյաների շրջանում Վարքագծի կանոնների և դրանց պահպանման նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը, որն էլ կնպաստի նրանց կողմից համապատասխան գերատեսչությունների աշխատակիցների շրջանում Վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմանը և վերջիններիս պահպանման կարևորության մշակույթի տարածմանը մյուս աշխատակիցների շրջանում:

IACA-ի և UNODC-ի կազմակերպած «Միջազգային հակակոռուպցիոն ամառային դպրոց ուսանողների և երիտասարդների համար» մեկշաբաթյա վերապատրաստման ծրագրին հայ երիտասարդներին մասնակցությունը նպաստեց ՀՀ երիտասարդների շրջանում կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային լավագույն փորձին ծանոթանալուն՝ բարձրացնելով նրանց իրազեկվածության մակարդակը կոռուպցիա երևույթի, դրա դեմ պայքարի կարևորության և կիրառվող միջոցների մասին:

Միջազգային հակակոռուպցիոն ամառային դպրոց՝ ուսանողների և երիտասարդների համար

Ապրիլի 04, 2022



Կոռուպցիայի կանխարգելման համաձայնագրով և ՄԱԿ-ի GRACE նախաձեռնությունը հրավիրում են մասնակցելու «Միջազգային հակակոռուպցիոն ամառային դպրոց ուսանողների և երիտասարդների համար» կրթական ծրագրին:

Ամառային դպրոցը նախատեսված է 18-29-ը տարեկան, անվերելի գերազանց իմացությամբ և թեմայով հետաքրքրված երիտասարդների համար:

Դիմելու վերջնաժամկետը 2022 թվականի ապրիլի 25-ն է:

Ամառային դպրոցի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հասանելի է կից նյութերում:

[Նյութի աղբյուրը](#). 33 կորուպցիայի, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

IACA-ի հետ փոխըմբռնման հուշագրի [ստորագրումն](#) ու համագործակցության ակտիվացումը Հայաստանը դարձրեց այդ միջազգային կազմակերպության համար ակտիվ համագործակցող անդամ երկրներից մեկը, որն էլ նպաստեց կազմակերպության կողմից Հայաստանի հակակոռուպցիոն բարեփոխումներին աջակցելու ցանկության առաջացմանը: Համագործակցելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացված առավել քան 2000 գիտականների և ոլորտի առաջատարների հետ՝ IACA-ի հետ համագործակցությունը առանձնահատուկ կարևորվում է, քանի որ այն հնարավորություն կտա օգտագործել միջազգային փորձն ու գիտական միտքը Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումները հաջողելու նպատակով:

4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսվել է իրականացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Այս գործընթացում ռազմավարությամբ Հանձնաժողովին է վերապահվել կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումն ու հաստատումը: Որպես վարչական կոռուպցիայի հաղթահարման իրատեսական ճանապարհ,



Հանձնաժողովը ստեղծման պահից լայնածավալ աշխատանքներ է իրականացրել այս ուղղությամբ:

Հանձնաժողովում նախատեսվել և ձևավորվել է Մեթոդական աջակցության վարչություն, որի կանոնադրությունը իր մեջ ամբողջությամբ ընդգրկում է ռիսկերի բացահայտման, գնահատման, վերլուծության, դրանց իրականացման նկատմամբ վերահսկության իրականացման, հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և ներդրման գործառույթները:

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախանշված միջոցառումները չնայած իրենց արդյունավետության տեսանկյունից չափազանց կարևոր են, այնուամենայնիվ, պետք է նշել, որ դրանց ձևակերպումները և իրականացման մեխանիզմները մշակվել են ոչ պատշաճ կերպով, ինչը հետագայում դրանց իրականացման համար խոչընդոտ է դարձել:

Այսպես օրինակ՝

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում առկա չէ որևէ իրավակարգավորում, որով Հանձնաժողովը լիազորված լինի պետական կառավարման ոլորտում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատում:

2. Հակակոռուպցիոն ռազմավարությամբ հանձնաժողովին վերապահվել է Կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակում և հաստատում, սակայն միջոցառումների ծրագրում ամրագրվել է արդեն գնահատման արդյունքների հիման վրա իրականացվող գործողությունների շղթա, որը բնականաբար առաջանցիկ է և առանց հաստատված մեթոդաբանության իրականացել հնարավոր չէ:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման ոլորտում իրականացված միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ռիսկերի գնահատումը և կառավարումը անհրաժեշտ է իրականացնել համապարփակ ձևով, միմյանց հետ փոխկապակցված և միմյանց հաջորդող գործողությունների նախանշմամբ՝ միասնական կառուցակարգերի ներդրման և շարունակական զարգացման հիմքով:

Խիստ կարևոր է, որպեսզի Հանձնաժողովը հստակ նախանշի այն առաջնահերթությունները, որոնք պետք է ռիսկերի գնահատման ոլորտում իրականացվեն՝ սկսած օրենսդրական փոփոխություններից, մինչև մեթոդաբանության հաստատում և կիրարկում: Այսինքն՝ առաջանցիկ գործողությունները կարող են հանգեցնել կարճաժամկետ արդյունքների, որոնք հետագայում չեն հանդիսանա ինստիտուցիոնալ մոտեցում և չեն հանգեցնի պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի շարունակական և արդյունավետ զսպման:

Հաշվի առնելով վերը թվարկվածը, Հանձնաժողովը նախանշել է գործողությունների կատարման հստակ ծրագիր, որի արդյունքը պետք է լինի



պետական կառավարման համակարգում այնպիսի կառուցակարգերի ներդրումը, որոնց արդյունքը կլինի.

1. Պետական կառավարման ողջ տիրույթում ռիսկերի արդյունավետ զսպում և կառավարում
2. Կոռուպցիայի կանխարգելման համակարգի շրջանակի սահմանում
3. Կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի կառավարման համակարգի ներդրում և նվազագույն պահանջների սահմանում
4. Ոլորտային գործունեության հետ կապված կոռուպցիոն ռիսկերի նվազեցում և կառավարում
5. Կոռուպցիոն ռիսկերի գնահատում միջազգային չափորոշիչներին համապատասխան

4.1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻՑ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի Մեթոդական աջակցության վարչության կանոնադրությամբ հաստատված են այն հստակ գործառույթները, որոն պետք է իրականացվեն վարչության աշխատակիցների կողմից:

4.1.1 ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Մեթոդական աջակցության վարչության առանցքային գործառույթը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումն ու հաստատումն է, որը Հանձնաժողովին որպես գործառույթ վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով:

2019-2022թ.թ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հոչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար առաջադրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարն առավել նպատակային իրականացնելու համար ինստիտուցիոնալ հենքերի ստեղծումն ու իրագործումը, հանրային ծառայողի առավել օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը,



ուլորտային օրենսդրական դաշտի կարգավորումներում երկակի մոտեցումներ կիրառելու հնարավորությունների հնարավորինս նվազեցումը, հանրային վերահսկողության ապահովման նպատակով թափանցիկության և մասնակցելության գործիքների շարունակական զարգացումը:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվեց իրավական դաշտի փոփոխությունը և համապատասխանեցումը արդի մարտահրավերներին և միջազգային չափանիշներին, կոռուպցիոն ռիսկերի զրոյացմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրումը և դրանց գործնական ապահովումը:

Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում մշակվել են ներքոհիշյալ ենթաուղղությունները

- ✓ Վարչական կոռուպցիայի հաղթահարում
- ✓ Հանրային կառավարման ոլորտում բարեվարքության ամրապնդում
- ✓ Հայտարարագրում
- ✓ Հակակոռուպցիոն ազդեցության գնահատում և մասնավոր հատվածի թափանցիկության բարձրացում

Վարչական կոռուպցիայի հաղթահարման տեսանկյունից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրված լիազորությունների շարքում առանցքային տեղ է զբաղեցնում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկեր ծնող պատճառների վերհանումը, դրանց գնահատումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված առողջացման ծրագրերի ներդրումը:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը (ախտորոշիչ) գործիք է, որը ձգտում է բացահայտել համակարգային թերությունները, որոնք կարող են բերել կոռուպցիայի առաջացման հնարավորությունների: Այն տարբերվում է շատ այլ գործիքներից, նրանով որ այն կենտրոնանալով է առկա ներուժի վրա, այլ ոչ թե կոռուպցիայի ընկալման կամ դրսևորման կամ չափի վրա: Ռիսկի գնահատման հիմքում կոռուպցիայի առաջացման հավանականության և/կամ դրա ազդեցության գնահատման որոշակի աստիճանն է: Որպես ընդհանուր կանոն, կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեծ մասն ունի ինստիտուցիոնալ մոտեցում, այսինքն՝ դրանք նպատակ ունեն բացահայտելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում կանոնների և կանոնակարգերի (կիրարկման) թույլ կողմերը, ոլորտը, վերլուծվող գործընթացը: Կոռուպցիոն ռիսկի գնահատման նպատակը սովորաբար լրացնելն է փաստացի բացերը և այն կարող է հիմք հանդիսանալ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման և իրագրելման համար: Կոռուպցիոն ռիսկը հավասարեցվում է համակարգի կամ գործընթացի ներսում ինստիտուցիոնալ խոցելիության մի շարք գործընթացների հետ, որոնք կարող է նպաստել կոռուպցիոն գործելաոճին:



Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ուղղորդմամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի զսպման համապարփակ մեթոդաբանություն, ինչպես նաև հետևել դրա շարունակական կիրառմանը (մշտադիտարկման եղանակով):

Որպես նշված խնդրի իրագործման կառուցակարգ Հանձնաժողովը դիտարկում է Ստանդարտների միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ISO) ստանդարտները, մասնավորապես՝ ISO 3700-ն, որը կաշառակերության դեմ պայքարի համընդհանուր ճանաչում ունեցող ստանդարտ է և նպատակ ունի օգնելու գործարկել կաշառակերության դեմ պայքարի կառավարման համակարգը և խթանել բարեվարքության մշակույթը՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի զսպման հիմքով:

Հակակոռուպցիոն ստանդարտների ներմուծումը, կսահմանի այն հիմնական սկզբունքները և պահանջները, որոնք պետք է պարտադիր կերպով կիրառվեն հանրային կառավարման բոլոր մարմիններում առանց բացառության, հետևաբար նաև ապահովեն արդյունավետ վարչարարության հասնելու տեսլականի իրատեսականությունը:

ISO 3700-ն սահմանում է մի շարք միջոցառումներ, որոնք ոչ միայն պետք է օժանդակեն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին կառավարելու կոռուպցիոն ռիսկերը, այլ նաև կանխարգելելու, հայտնաբերելու և պատշաճ արձագանքելու դրանց: Նման չափորոշիչների ներդնումը հնարավորություն է տալիս բարելավելու պետական կառավարման համակարգի կատարողականը, ինչպես նաև ստեղծել ինստիտուցիոնալ հիշողություն, որը ներգրավված է գնահատման, գործընթացների ուղղման և կատարելագործման շարունակական ցիկլում՝ հանրային ծառայության ոլորտում ներգրավված քաղաքացիական ծառայողների և համայնքային ծառայողների իրազեկվածության բարձրացման, ղեկավար մարմինների հմուտ կառավարման և նվիրվածության միջոցով:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար արդյունավետ կառավարման համակարգի առավելությունները ներառում են.

- ✓ Ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումը և ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության բարձրացումը
- ✓ Ռիսկերի արդյունավետ զսպումը և կառավարումը
- ✓ Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում գործընթացների կանխատեսելիության բարձրացումը, բնականոն զարգացումն ու ծառայությունների պատշաճ մատուցումը

Միջազգային չափորոշիչների ներդրմամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում հնարավոր կլինի իրականացնել.



- ✓ Կոռուպցիոն ռիսկերի և հարակից ռիսկերի նույնականացում և կառավարում, ինչպիսին է օրինակ հեղինակության ռիսկը (գաղտնիք չէ, որ ՀՀ-ում վերջին տարիների ընթացքում կտրուկ նվազել է պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակության վստահելիության աստիճանը):
- ✓ Կաշառակերության դեմ պայքարի կառավարման համակարգի ներդրում, չափորոշիչի նվազագույն պահանջների սահմանում
- ✓ Ղեկավարությանը, ներդրողներին, հանրային ծառայողներին, քաղաքացիներին, կարգավորող մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին հավաստիացումներ տրամադրելը, առ այն որ պետությունը ողջամիտ քայլեր է ձեռնարկում կոռուպցիան կանխելու, հայտնաբերելու և դրան պատշաճ արձագանքելու համար
- ✓ Ցույց տալ, որ պետությունը ոչ միայն ողջամիտ քայլեր է ձեռնարկել կաշառակերությունը կանխելու, հայտնաբերելու և պատշաճ արձագանքելու համար, այլ նաև կիրառել է կաշառակերության վերահսկողության լավագույն փորձը:
- ✓ Այնպիսի չափորոշիչների ներդրում, որոնց շնորհիվ ոլորտային գործունեության հետ կապված կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը և կառավարումը իրատեսական կլինի
- ✓ Ամրապնդել պետական կառավարման համակարգի նկատմամբ հանրային վստահելիությունը և նպաստել դրա կայունությանը
- ✓ Չափորոշիչների ներդրմամբ բարձրացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև խթանել բարեվարքության մշակույթի ձևավորումը

Սրանով լուծվում է ոչ միայն վարչական կոռուպցիայի հաղթահարման խնդիրը, այլ նաև պետական կառավարման համակարգի ողջ տիրույթում սահմանվում են միասնական կառուցակարգեր, որոնք կիրառման և կառավարման տեսանկյունից կլինեն նույնական:

Նման առաջարկը հիմնավորվում է նրանով, որ միջազգային ստանդարտներին համապատասխան կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի զսպման համապարփակ մեթոդաբանությունը պետք է լուծի ներքոնշված խնդիրները.

1. Պետական կառավարման ողջ տիրույթում ռիսկերի արդյունավետ զսպում և կառավարում,
2. Կոռուպցիայի կանխարգելման համակարգի շրջանակի սահմանում,
3. Կաշառակերության դեմ պայքարի կառավարման համակարգի ներդրում և նվազագույն պահանջների սահմանում,
4. Ոլորտային գործունեության հետ կապված կոռուպցիոն ռիսկերի նվազեցում և կառավարում,



5. Կոռուպցիոն ռիսկերի գնահատում միջազգային չափորոշիչներին համապատասխան:

Որպես նշված գործառույթի զարգացման հեռանկար, դիտարկվում է գործարկել կոռուպցիոն ռիսկերի գնահատման էլեկտրոնային գործիք (արհեստական բանականության վերլուծական հիմքով), որը հնարավորինս կբացառի մարդկային գործոնի ազդեցությունը ռիսկերի գնահատման գործընթացներում՝ դարձնելով դրանք առավել թափանցիկ և կառավարելի:

Մեթոդական աջակցության վարչության 2022 թվականի տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսվել է իրականացնել «Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման հայեցակարգ»-ի նախագծի մշակում:

Մեթոդական աջակցության վարչության առաջարկությամբ՝ Հանձնաժողովը իրականացրել է խորհրդատվական ծառայությունների գնում «ՍԻԳՆՈՒՄ» ՍՊԸ-ից, որը վարչության աշխատակիցների հետ համատեղ պետք է իրականացնի:

- Միջազգային ստանդարտներին համապատասխան կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և ռիսկերի կառավարման Հայեցակարգի մշակման աշխատանք:

Հայեցակարգի նախագիծը ներկայացվել է Վարչության քննարկմանը, արվել են համապատասխան դիտարկումներ և առաջարկություններ, որոնց հիման վրա իրականացվում են լրամշակման աշխատանքներ: Լրամշակված Հայեցակարգը և հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագիրը ներկայացվել է ՀՀ ԱՆ, շրջանառվել է պետական գերատեսչություններում, կազմվել է կարծիքների և առաջարկությունների ամփոփաթեթ:

Նախատեսվում է.

- Հայեցակարգը Հանձնաժողովի կողմից հաստատելուց անմիջապես հետո, նախատեսվում է իրականացնել Հայեցակարգի կիրառական ուղեցույցի մշակում:

- Կարևորագույն խնդիր է Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացման վերապատրաստման դասընթացների կազմակերպումն ու անցկացումը, որը նույնպես ներառված է ծառայությունների մատուցման պայմանագրում, արդեն կազմված է դասընթացների տևողության ժամանակացույցը:

4.1.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.

(Ի կադրարումն ԳՐԵԿՈՒ-ի և ՏՀՀԿ-ի կողմից ներկայացրած դիմագրվում, առաջարկությունների)



Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի և Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (այսուհետ նաև՝ ԳՐԵԿՈ) կողմից Հայաստանի Հանրապետության չորրորդ փուլի գնահատման արդյունքներում առկա են հանձնարարականներ, որնոր առնչվում են ՀՀ-ում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերներ ընդունելու արգելքի հետ կապված բացերին:

ԳՐԵԿՈ-ն առաջարկել է մշակել պատգամավորների, դատավորների, դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերի մասին: ԳՐԵԿՈ-ն արձանագրել է նաև, որ թե «Հանրային ծառայության մասին» օրենքի, թե Դատական օրենսգրքի՝ թույլատրելի նվերների վերաբերյալ կարգավորումներում առկա են անորոշ ձևակերպումներ: Օրենքով որոշ նվերների և հյուրասիրության մասին հայտնելու պահանջ սահմանված չէ, օրինակ «սովորաբար կազմակերպվող հյուրասիրություն», «կրթաթոշակ, դրամաշնորհ կամ նպաստ, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով», «բարեկամից ստացված նվերները, եթե նվերն էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին»:

Արձանագրվել է նաև, որ առկա չեն նվերների հաղորդման և գրանցման կոնկրետ մեխանիզմներ, իսկ ընթացիկ կարգավորումները, որոնց համաձայն՝ նվերները ստուգվում են միայն որպես տարեկան եկամուտների հայտարարագրերի մաս՝ այնքանով, որքանով դրանք հանդիսանում են գույք կամ եկամուտ, ակնհայտորեն բավարար չեն ապահովելու համար շարունակական և համապարփակ վերահսկողություն:

ԳՐԵԿՈ-ն հրապարակված զեկույցում առաջարկում է ներդնել մեխանիզմներ, այդ թվում՝ նախատեսելով համապատասխան պատժամիջոցներ՝ ապահովելու համար անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողություն էթիկայի կանոնների և անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և նվերների ընդունման սահմանափակումների պահպանման նկատմամբ:

2021 թվականին համակարգող անդամ Լիլիթ Ալեքսանյանի համակարգմամբ միջազգային փորձագետի կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման



վրա Մեթոդական աջակցության վարչությունը մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի կառուցակարգերի կատարելագործման հայեցակարգ և գործողությունների ծրագիր, որն իր արտացոլումն է գտել ՀՀ կառավարության գործողությունների ծրագրում:

Հայեցակարգի հաստատմամբ, հնարավոր կլինի իրականացնել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական լիազորությունների իրականացման ընթացքում ստացած նվերների վերահսկողություն, ինչպես նաև կենտրոնական մարմնի սահմանում, որը կիրականացնի պատշաճ և միասնական քաղաքականություն նվերների ընդունման արգելքի իրավական նորմերի կիրառման ոլորտում: Հայեցակարգը միտված է ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվեր ընդունելու արգելքի վերաբերյալ սահմանափակում նախատեսող իրավակարգավորումների միասնականությունը՝ դրանք գետեղելով միայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և տարածելով հանրային ծառայության բոլոր ոլորտների և տեսակների վրա: Հայեցակարգի առանցքային կետերից է նաև նվերների թվայնացված ռեեստրի ստեղծումը, որը կապահովի նվերների հայտարարագրման, դրանց գնահատման, ինչպես նաև տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ, ինչպես նաև կապահովի համակարգի փոխգործելիությունը հայտարարագրերի թվային համակարգի հետ:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը, պարտավոր կլինեն իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում (այսինքն՝ Ռեեստր): Համաձայն առաջարկվող օրենսդրական փոփոխության՝ նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, խորհրդատվական կարծիքի տրամադրման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը սահմանելու է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

2022 թվականին Հայեցակարգի հիման վրա վարչության կազմում ընդգրկված իրավաբան-փորձագետի կողմից իրականացվել է օրենսդրության ուսումնասիրություն (իրավական ակտեր, որոնք պարունակում են կարգավորում նվերների հանձնման կամ ընդունման վերաբերյալ), առկա հակասությունների, տարաբնույթ կարգավորումների վերհանում, որից հետո մշակվել և ՀՀ ԱՆ է ներկայացվել ««Հանրային ծառայության մասին օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը շրջանառվել է պետական գերատեսչություններում,



հավաքագրվել են ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները, կազմվել են համապատասխան տեղեկանք և ամփոփաթերթ, որոնք ևս ելից գրությամբ ներկայացվել են ՀՀ ԱՆ:

Հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու արգելքի Հայեցակարգով նախատեսված գործողությունները իրականացնելու նպատակով մշակվել և հաստատվել է գործողությունների ծրագիր, որով սահմանված ժամկետները հնարավորինս պահպանվում են: Այժմ ընթացքի մեջ են կարգերի մշակման աշխատանքները:

4.2 ԲԿԳ ԱԶԱԿԻՑ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ.

Դեռևս 2021 թվականից Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների ծրագրի շրջանակում, որպես հանձնառություն ընդգրկված է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերահսկողության տակ գտնվող բարեվարքության համարագի բաղադրիչներից՝ հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու արգելքի ինստիտուտի ներդրումն ու զարգացումը:

Մեթոդական աջակցության վարչության կողմից 2022 թվականի ապրիլ ամսին մշակվել և ելից գրությամբ ՀՀ վարչապետի գրասենյակ է ներկայացվել ԲԿԳ Հայաստան ծրագրի Հանձնառություն 2-ը, այն է՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նվերների ընդունման արգելքի ինստիտուտի կատարելագործում և ռեեստրի ստեղծում» առաջարկը՝ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված ձևաչափին համապատասխան:

Այս աշխատանքների իրականացման շրջանակում վարչությունը մասնակցել է մի շարք աշխատանքային քննարկումների: Այս մասով աշխատանքները ընթացքի մեջ են:

4.3 ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.

2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Վարչության կողմից կազմվել և հանձնաժողովի նախագահին է ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն ծրագրի 7,8,16 միջոցառումների փոփոխությունների վերաբեյալ առաջարկությունների փաթեթ, որով առաջարկվել է 7-րդ և 8-րդ միջոցառումները ներառել մեկ միջոցառման տակ և համապատասխանեցնել Հանձնաժողովի պահանջներին, իսկ 16-րդ միջոցառումը վերաձևակերպել՝ կարգավորման ազդեցության գնահատումը փոխարինել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությամբ: Ներկայացված առաջարկությունները հիմնականում



ընդունվել են՝ բացառությամբ որոշ ձևակերպումների, որոնց մասով վարչությունը նույնպես տվել է եզրակացություն-առաջարկ:

4.4 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վարչությունը սերտորեն համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ, այսպես օրինակ.

Համագործակցություն Ս4 Շվեյցարական հակակոռուպցիոն ռեսուրս կենտրոնի հետ, որի արդյունքում՝

Առաջին արդյունքը.

ԿԿՀ-ի հանձնարարությամբ, կոռուպցիոն ռիսկերի գնահատման ազգային կամ ենթազգային ակնառու օրինակների հավաքագրում և վերլուծություն:

Երկրորդ արդյունքը.

Ս4-ի կողմից հրապարակված ամփոփ փաստաթուղթ՝ առավելագույնը 10,000 բառ, Ս4-ի ոճին համահունչ, որը պարունակում է՝

- Համառոտ տարբերակը՝ մինչև 1000 բառ
- Ներածություն, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման բոլոր գործիքների ընդհանուր աղյուսակը, որոնք ներկայումս կանոնավոր կերպով օգտագործվում են ազգային կամ ենթազգային մակարդակներում
- Դեպքի ուսումնասիրություններ (առավելագույնը 2500 բառ յուրաքանչյուր օրինակի համար), որը պարունակում է.
 - * Ռիսկերի գնահատումն իրականացնող մարմնի լիազորությունների համառոտ նախապատմություն և նկարագրություն
 - * Գնահատումների և օգտագործվող ռեսուրսների շրջանակը
 - * Օգտագործված մեթոդաբանությունը
 - * Գնահատումների և դրանց հասանելիության հսկողության մեխանիզմը
 - * Հաջողությունների և անհաջողությունների, մարտահրավերների, ժամանակի ընթացքում կատարված ճշգրտումների օրինակներ
- Հղումներ (օրենսդրության մասով):

Երրորդ արդյունքը.

Փաստաթղթի նախագծի ներկայացում աշխատաժողովի մասնակիցներին:

Համագործակցության շրջանակում, նախատեսվում է սույն թվականի սեպտեմբեր ամսին Երևան քաղաքում կազմակերպել և անցկացնել տարածաշրջանային աշխատաժողով՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման վերաբերյալ:

Համագործակցություն ԵՄ Թվինինգ ծրագիր շրջանակում, որի արդյունքում նախատեսվում են ներքոնշված արդյունքները.

- Թվինինգ ծրագրի շրջանակում գերմանացի փորձագետների եռօրյա այլցելություն Հայաստան, աշխատանքների կազմակերպման քննարկում:



- ՀՀ-ում պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և գնահատման ոլորտային մեթոդաբանության մշակում
- Մշակված մեթոդաբանության պիլոտային կիրառում երեք կառույցում
- Փորձի փոխանակում
- ԿԿՀ Աշխատակիցների կարողությունների զարգացում

ՄԱԿ զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցություն՝ Կոռուպցիոն ռիսկերի գնահատման պրակտիկ փորձի ուսումնասիրության շրջանակում.

Համագործակցության արդյունքում.

- Ուսումնասիրել և ներկայացնել Հարավային Կորեայում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի կառավարման մեթոդաբանությունը
 - Ուսումնասիրել պետական կառավարման մարմինների սերտիֆիկացման ընթացակարգերը (ինչպես օրինակ՝ ISO ստանդարտներով նախատեսված սերտիֆիկացումն է).
 - Հարավային Կորեայում հակակոռուպցիոն մարմնի լիազորությունները, որոնք վերաբերում են կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը, գնահատմանը և ռիսկերի կառավարմանը (իրավական հիմքերը):
 - Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի կառավարման գործընթացների վրա ծախսվող ռեսուրսների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն:
 - ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվող մեթոդաբանության աշխատանքներին աջակցելը.
- ԿԿՀ-ի կողմից մշակվող մեթոդաբանության վերաբերյալ կարծիքի տրամադրում
- Հնարավորության դեպքում՝ օգնել աշխատանքային խմբին առավել կենսունակ մեթոդաբանություն մշակելու գործում:

Վարչության կողմից իրականացվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրություն, որի վերաբերյալ կազմվել և ներկայացվել է համապատասխան եզրակացություն՝ օրենքում առկա բացերի վերաբերյալ:

Վարչության աշխատակիցները անցած կիսամյակի ընթացքում մասնակցել են մի շարք աշխատանքային քննարկումների, ինչպես նաև կարողությունների զարգացման վերապատրաստման և սեմինարների:



5. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

5.1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻՑ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարագրերի վերլուծության վարչությունը բաղկացած է երկու բաժնից՝

- ✓ Հայտարարագրերի վերլուծության բաժին,
- ✓ Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժին:

Հայտարարագրման բաժնի հիմնական գործառույթներն են՝

- ✓ Հայտարարագրման գործընթացի կանոնակարգում,
- ✓ Հայտարարագրերի ստուգում և վերլուծություն:

Հայտարարագրման գործընթացի կանոնակարգման շրջանակներում Վարչությունն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

- ✓ Հայտարարատուների և հայտարարագրերի ռեեստրների վարում,
- ✓ Հայտարարագրերի ներկայացման գործընթացի կանոնակարգում,
- ✓ Հայտարարագրերի հրապարակում,
- ✓ Հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու գործընթացի կանոնակարգում:

Հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացի շրջանակներում Վարչությունն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

- ✓ Հայտարարագիր ներկայացնելու պահանջի պահպանման ստուգում,
- ✓ Հայտարարագիր լրացնելու պահանջի պահպանման ստուգում,
- ✓ Հայտարարագրերի ստուգում և վերլուծություն:

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի գործառույթներն են՝

- ✓ Կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող գործընթացների կանոնակարգում,
- ✓ Կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ ղեկավար մարմնի անդամների հայտարարագրման գործընթացի կանոնակարգում,
- ✓ Հայտարարագրերի ստուգում և վերլուծություն:

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթների շրջանակներում Վարչությունն իրականացնում է հետևյալ գործողությունները՝



✓ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն,

✓ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման ստուգում,

✓ կուսակցությունների տարեկան հաշվետվություններում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության ստուգում,

✓ կուսակցությունների տարեկան հաշվետվություններում առկա տեղեկատվության և տվյալների ամբողջականության ստուգում,

✓ աուդիտորական ընկերությունների ընտրություն:

Վարչության հիմնական գործառույթների իրականացման համար հաստիքացուցակով սահմանված են հետևյալ հաստիքները՝

✓ վարչության պետ՝ 1 հաստիքային միավոր,

✓ բաժնի պետ՝ 2 հաստիքային միավոր,

✓ գլխավոր մասնագետ՝ 6 հաստիքային միավոր,

✓ ավագ մասնագետ՝ 3 հաստիքային միավոր:

Ընդ որում՝ նշված հաստիքներից երեքը համալրվել են հաշվետու ժամանակահատվածի տարբեր փուլերում, իսկ թվով չորս հաստիք թափուր է եղել:

Վարչության հիմնական աշխատանքներում աջակցության համար հաշվետու ժամանակահատվածում ներգրավվել են Հանձնաժողովի՝ թվով մեկ և միջազգային գործընկերների աջակցությամբ՝ թվով 5 փորձագետներ:

5.2 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարագրման գործընթացը սկսվում է հայտարարատու պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ Հայտարարատու) տվյալների՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրումից:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 30.06.2022 թվականի դրությամբ, Համակարգում գրանցված հայտարարատուների թիվը՝

✓ **պաշտոնատար անձ՝ 5448**

✓ **ընտանիքի անդամ՝ 20337**

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի ղեկավարը կամ աշխատակազմի ղեկավարի գործառույթներ իրականացնող անձը տվյալ մարմնում «Հանրային ծառայության մասին օրենքի» իմաստով Հայտարարատուին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Հանձնաժողովի՝ 12.06.2020 թվականի թիվ Ա-01/2020



որոշմամբ հաստատված կարգով ծանուցում է Հանձնաժողովին՝ տրամադրելով ռեեստրը և համապատասխան ակտ(եր)ի պատճեն(ներ)ը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը ստացել և Համակարգ է մուտքագրել թվով 875 ռեեստր 262 պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններից թվով 3642 անձանց վերաբերյալ:

Նշված ռեեստրները վերաբերել են թվով 845 պաշտոնի ստանձնման, թվով 1111 պաշտոնի դադարեցման, թվով 58 պաշտոնի ստանձնման և դադարեցման վերաբերյալ տեղեկություններին: Հանձնաժողովի կողմից պարբերաբար կատարվող իրազեկման միջոցառումների արդյունքում Հանձնաժողովը ստացել և մուտքագրել է մինչև 2022 թվականն ընդգրկող ժամանակահատվածի վերաբերյալ ռեեստրներ պաշտոնների՝ թվով 1628 փոփոխությունների վերաբերյալ:

Նշված տվյալները ստանալուց հետո դրանք համապատասխան աշխատակցի կողմից մուտքագրվում են Համակարգ, որից հետո ռեեստրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին հայտարարատուն ստանում է ծանուցում հայտարարագրման պարտականություն ունենալու վերաբերյալ: Ծանուցման մեջ նշվում է օգտանունն ու գաղտնաբառը, որով Հայտարարատուն հնարավորություն է ստանում մուտք գործել Համակարգ և լրացնել համապատասխան հայտարարագիրը: Համակարգ բարեհաջող մուտք գործելուց հետո Հայտարարատուն ստուգում է իր անձնական տվյալները, այդ թվում՝ զբաղեցրած պաշտոն(ներ)ն ու ժամանակահատված(ներ)ը, այնուհետև լրացնում ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց՝ պահանջվող տվյալները: Նշված անձանց ընտանիքի կազմում լրացնելուց հետո ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամի համար ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին Համակարգն ինքնաշխատ եղանակով ծանուցում է ուղարկում նույն ընթացակարգով՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունենալու վերաբերյալ: Նշված գործողությունները կատարելուց հետո Հայտարարատուն ընտրում է լրացման ենթակա հայտարարագրի տեսակը, լրացնում այն և հանձնում:

Հայտարարատուի ընտանիքի անդամները ևս հայտարարագիրը լրացնում և հանձնում են նույն ընթացակարգով: Հայտարարատուն իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի (անձանց) գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները լրացնում է իր հայտարարագրում: Հայտարարատուները, նրանց ընտանիքի անդամները պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը Հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:



Հայտարարագիրը դրա հանձնման օրվան հաջորդող հինգերորդ օրը հրապարակվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հետևյալ հղումով՝ <http://cpcarmenia.am/hy/declarations-registry/>: Յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի վերոնշյալ հղման միջոցով անվան, ազգանվան, պաշտոնի լրացման դեպքում փնտրել և դիտել հայտարարատու հանդիսացող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած հայտարարագիր(եր)ը՝ բացառությամբ հայտարարագրի այն տվյալների, որոնք հրապարակման ենթակա չեն: Հանձնաժողովն ապահովում է հրապարակման ոչ ենթակա տվյալների պաշտպանությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով է ներկայացվել թվով 12657 հայտարարագիր, որից՝

✓ 414 պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր,


✓ 631 պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիր,

✓ 5180 պաշտոնատար անձի տարեկան հայտարարագիր,

✓ 346 պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր,

✓ 461 պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիր,

✓ 5625 պաշտոնատար անձի ընտանիքի անդամի տարեկան հայտարարագիր,



Հարկ է նշել, որ 2021 թվականի տարեկան հայտարարագրերում, հայտարարագրվող տեղեկությունների ընդլայնման շրջանակներում, հայտարարատուներն առաջին անգամ տեղեկություններ են ներկայացրել իրենց կողմից փաստացի տիրապետվող գույքի, ինչպես նաև այն գույքի վերաբերյալ, որը



սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն, ինչպես նաև կատարված ծախսերի վերաբերյալ: Նշված կարգավորումների արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն ունի ստանալու ամբողջական տեղեկատվություն հայտարարատու պաշտոնատար անձի ֆինանսական դրության վերաբերյալ, ինչը կնպաստի հնարավոր խախտումների բացահայտմանը:

Հայտարարատուն, հայտարարագիրը էլեկտրոնային եղանակով լրացնելու հնարավորության բացակայության դեպքում, կարող է դիմել Հանձնաժողովին՝ այն ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով ներկայացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով Հանձնաժողով է ներկայացվել թվով 2 հայտարարագիր:

Հայտարարատուն, նրա ընտանիքի անդամը հանձնված և չհրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը կարող են հայտարարագրում ինքնուրույն ուղղում անելու միջոցով վերացնել հայտարարագիրը հանձնելուց հետո՝ քառօրյա ժամկետում, բայց հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու նպատակով կարող են դիմել Հանձնաժողով: Հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե դրանում նշված տվյալի անհամապատասխանությունն այլ կերպ բացահայտված է:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը ստացել է թվով 205 ուղղման դիմում, որից 153-ը բավարարվել է, 4-ը մերժվել, 48-ը ուսումնասիրման փուլում:

Հանձնաժողովի կողմից պարբերաբար իրականացվող իրազեկման միջոցառումների արդյունքում ուղղման դիմումների թիվը 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ եռապատկվել է: Ուղղման դիմումները վերաբերել են հիմնականում հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից նախկինում ներկայացված հայտարարագրերին, քանի որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման օրվանից արվել է առավելագույնը՝ հայտարարատուների կողմից հայտարարագրերը ճիշտ լրացնելու համար, և Հանձնաժողովի նպատակը ոչ թե պատժիչ, այլ կանխարգելող գործողությունների իրականացումն է: Թվով 4 ուղղման դիմումների մերժման պատճառներն են եղել նշված անձի վերաբերյալ Հանձնաժողովում սկսված հայտարարագրերի վերլուծությունը, ներկայացված հայտարարագրերը քրեական գործի նյութերի մաս հանդիսանալու փաստը, բարեվարքության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը, գործերը դատախազությունում գտնվելը:



Հայտարարագիրը հանձնելուց և հրապարակվելուց հետո Հանձնաժողովն իրականացնում է այն ներկայացնելու պահանջի պահպանման ստուգում, որը ներկայում կատարվում է մեխանիկական եղանակով՝ յուրաքանչյուր հայտարարատուի համար առանձին ուսումնասիրելու միջոցով, ինչը լրացուցիչ ժամանակ և ռեսուրսներ է պահանջում: Ձևավորվում է հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացրած անձանց ցանկ, որոնք նախ հեռախոսազանգի միջոցով են տեղեկացվում հայտարարագիրը լրացնելու վերաբերյալ՝ խնայելու համար Հանձնաժողովի միջոցներն ու ռեսուրսները, ապա Հանձնաժողովի կողմից ուղարկվում են գրավոր ծանուցումներ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունենալու վերաբերյալ և տրվում է 30-օրյա ժամկետ համապատասխան հայտարարագիրը ներկայացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացրած թվով 1100 անձանց ուղարկել է ծանուցումներ, որի արդյունքում լրացվել են թվով 342 հայտարարագրեր:

Նշված ծանուցումների մեջ գերակշիռ թիվ են կազմում համայնքների հայտարարատու պաշտոն զբաղեցնող անձանց 2021 թվականի տարեկան հայտարարագրերը:

Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա համապատասխան հայտարարագիրը չներկայացնելու դեպքում նշված անձին ուղարկվում է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու ծանուցում՝ հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով: Հարկ է նշել, որ ՀՀ օրենքներով սահմանված է վարչական և քրեական պատասխանատվություն՝ հայտարարագիրը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելու համար:

Վարչության կարևորագույն գործառույթը հայտարարագրերի վերլուծությունն է, որը կատարվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ ռիսկային ցուցանիշների, հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա:

Հայտարարագրերի վերլուծությունը ներկա պահին իրականացվում է պահանջվող տվյալները մեխանիկական եղանակով կիսաավտոմատացված ծրագրեր մուտքագրելու միջոցով: Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում թվով 337 անձանց վերաբերյալ Հանձնաժողովի կողմից կատարվել են հարցումներ թվով 14 կառույցներ:




Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրականացնում է հայտարարագիր լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգում, հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծություն:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են թվով 85 պաշտոնատար անձանց և նրանց՝ թվով 252 ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծություններ: Վերլուծված հայտարարագրերի ընդհանուր թիվը կազմել է 1843, այդ թվում՝

- ✓ 750 պաշտոնատար անձի հայտարարագիր,
- ✓ 1093 ընտանիքի անդամի հայտարարագիր:

Վերլուծությունները կատարված թվով 85 պաշտոնատար անձանցից՝

- ✓ 78-ը դատավորներ են,
- ✓ 4-ը՝ Ազգային ժողովի պատգամավոր,
- ✓ 1-ը՝ նախարար,
- ✓ 1-ը՝ դատախազ,
- ✓ 1-ը՝ այլ պետական պաշտոնյա:



Հայտարարագրերի վերլուծության արդյունքում կազմվում են համապատասխան արձանագրություններ և ներկայացվում Հանձնաժողովի նիստում: Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրը ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա տվյալները փոխանցվում են Վարույթների և իրավական ապահովման վարչություն՝ վարչական



իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար: Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ Հայտարարատուի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը կամ ծախսը ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովը հայցում է պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում պարզաբանում է հայցվել թվով 40 պաշտոնատար անձանցից և նրանց՝ թվով 41 ընտանիքի անդամներից:

Հաշվետու ժամանակահատվածում պարզաբանում է ստացվել թվով 30 պաշտոնատար անձանցից և նրանց՝ թվով 20 ընտանիքի անդամներից:

Եթե հայտարարատուն սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, ապա այդ դեպքում ևս Հանձնաժողովը նյութերն ուղարկում է գլխավոր դատախազություն: Առանձին դեպքերում Հանձնաժողովն իրավասու է անձանցից պահանջել ներկայացնելու գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:

Հաշվետու ժամանակահատվածում անձնակազմի կարողությունների զարգացման շրջանակներում Վարչության աշխատակիցները մասնակցել են տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից վերապատրաստման մի շարք միջոցառումների, փորձի փոխանակման և **վերապատրաստման** շրջանակներում Վարչության պետը եղել է Ռումինիայում և Չեխիայում:

Հայտարարագրերի լրացման և ներկայացման գործընթացում հեռախոսազանգերի, էլեկտրոնային փոստի, Հանձնաժողովի ֆեյսբուքյան էջի նամակագրության միջոցով Վարչության կողմից շարունակական **աջակցություն է ցուցաբերվել հայտարարագիր լրացնող անձանց:** Միջազգային գործընկերների աջակցությամբ ստեղծվել են հայտարարագիր լրացնելու վերաբերյալ թվով **11 տեսահոլովակներ**, որոնք տեղադրվել են Համակարգում, Հանձնաժողովի յուրօրյան և ֆեյսբուքյան էջերում:

Վարչության նախաձեռնությամբ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից նշանակվել են խորհրդատուներ, որոնց համար առանձին վերապատրաստումներ են իրականացվել Վարչության մասնագետների կողմից՝ յուրաքանչյուրն իր կառույցում հայտարարագրման գործընթացի վերաբերյալ առավել խորը գիտելիքներ ունենալու շնորհիվ նշված կառույցի հայտարարատու անձանց աջակցություն ցուցաբերելու, խնդիրները հավաքագրելու և Հանձնաժողով ներկայացնելու համար:

Հայտարարագրման գործող էլեկտրոնային համակարգը ստեղծվել է շուրջ տասը տարի առաջ: Հայտարարատուների թվի, հայտարարագրերում



ներկայացվող տեղեկությունների աճին զուգընթաց՝ գործող համակարգը ներկայում աշխատում է գերծանրաբեռնված ռեժիմով, հայտարարագրման գործընթացը մեծամասամբ վերահսկվում է մեխանիկական աշխատանքի միջոցով, ինչը լրացուցիչ ռեսուրսների կարիք, մեխանիկական հավանական սխալների ռիսկ է առաջացնում: Այս հիման վրա Հանձնաժողովը նախաձեռնել է Համաշխարհային բանկի աջակցությամբ ստեղծել **հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգ**, որի նախագծումն ու գործարկումն իրականացնում է Սիներջի ընկերությունը: Պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունենում Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցների, համակարգը նախագծող ընկերության ներկայացուցիչների, փորձագետների և տվյալների էլեկտրոնային շտեմարանների միջոցով փոխգործելիության հարթակն ապահովող կառույցի ներկայացուցիչների հետ: Հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի հնարավորությունները էականորեն տարբերվելու են գործող համակարգից: Թվային նոր համակարգը հնարավորություն է տալու բարելավելու հայտարարագրման գործընթացը, մասնավորապես՝ ավելի դյուրին է դարձնելու հայտարարագիր լրացնելը հայտարարատուների համար և հայտարարագրերի վերլուծությունները՝ համապատասխան մասնագետների համար: Ամբողջ գործընթացն ավտոմատացվելու է, կլինի հայտարարագրվող տվյալների ինքնաշխատ բեռնման հնարավորություն տարբեր գերատեսչությունների էլեկտրոնային շտեմարաններից, և հայտարարատուն ստիպված չի լինի ամեն անգամ միևնույն տվյալները նորից լրացնել: Համակարգը հնարավորություն կտա մշակել և ունենալ կոնկրետ պայմանների վրա կառուցված ավտոմատացված հաշվետվություններ, կապահովի առավելագույն թափանցիկություն և հաշվետվողականություն, քանի որ իրական ռեժիմով առկա տվյալները ներբեռնելու, դրանց հիման վրա վերլուծություն իրականացնելու հնարավորություն կլինի: Համակարգի արդիականացումը մեծապես կօժանդակի ոչ միայն Հանձնաժողովին՝ իր գործառույթներն իրականացնելիս և հայտարարատուներին՝ հայտարարագիր լրացնելիս, այլև հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր անձանց ինքնուրույն ֆիլտրելու, ուսումնասիրելու հրապարակված բոլոր հայտարարագրերը:

Հայտարարագրերի վերլուծությունը ևս ներկա պահին իրականացվում է պահանջվող տվյալները մեխանիկական եղանակով կիսաավտոմատացված ծրագրեր մուտքագրելու միջոցով: Թվային տեխնոլոգիաները ինտեգրելու և հատուկ մշակված ալգորիթմների կիրառման արդյունքում հնարավորություն կստեղծվի հայտարարագրերի վերլուծության գործընթացը ևս առավել արդյունավետ դարձնել: Հայտարարագրերի վերլուծությանը կօժանդակեն ալգորիթմները, որոնք մշակվելու են ռիսկային ցուցիչների հիման վրա: Սրա արդյունքում համակարգը հնարավորինս զերծ կլինի մարդկային գործոնով պայմանավորված ընտրողական մոտեցումներից:



Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողությանն առնչվող՝ Հանձնաժողովին վերապահված գործառույթների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից Հանձնաժողովին է փոխանցվել կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողության հետ կապված [փաստաթղթերի փաթեթը](#):

Տեղեկատվության բաց աղբյուրներից հավաքագրվել է ՀՀ-ում գրանցված բոլոր կուսակցությունների տվյալները, որոնց թիվը այդ պահի դրությամբ կազմել է 112:

Կուսակցության հայտարարատու անձանց տվյալները հավաքագրելու համար մշակվել է ձևաթուղթ, դրա լրացման անհրաժեշտ ուղեցույցը և այն տրամադրվել կուսակցություններին՝ առաջարկելով ներկայացնել հայտարարատուների վերաբերյալ պահանջվող տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային համակարգ մուտքագրելու համար:

Գործող հայտարարագրման էլեկտրոնային համակարգին զուգահեռ՝ ներդրվել է կուսակցությունների հայտարարատու անձանց հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգ, որտեղ հայտարարագրման մեխանիզմները և ձևանմուշները համապատասխանեցվել են կուսակցությունների ղեկավար մարմինների կողմից հայտարարագրերի ներկայացման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին:

ՀՀ-ում գրանցված և գործող կուսակցություններից 68-ի կողմից ստացվել են պահանջված տեղեկությունները, որոնք պարունակել են թվով 533 Հայտարարատուների վերաբերյալ տվյալներ:

Ուսումնասիրվել է կուսակցություններից ստացված Հայտարարատուների տվյալների արժանահավատությունը, դրանք համեմատվել են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ պետական ռեգիստրի գործակալություն) բազայում առկա փաստաթղթերի հետ, անճշտությունների հայտնաբերման դեպքում էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցումներ են ուղարկվել կուսակցություններին՝ առաջարկելով կատարել համապատասխան ճշգրտումներ:

Կուսակցություններից ստացված հայտարարատուների տվյալները մուտքագրվել են հայտարարագրման էլեկտրոնային համակարգ:

Աուդիտի կազմակերպման նպատակով մշակվել է կուսակցություններից պահանջվող անհրաժեշտ տեղեկությունների ներկայացման ձևաչափ, այն ուղարկվել կուսակցություններին՝ առաջարկելով ներկայացնել պահանջվող նախնական տեղեկությունները:

Պարզվել է նախորդ տարվա ընթացքում պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների ցանկը՝ դրանք այս տարվա պարտադիր աուդիտի



ենթակա կուսակցությունների ցանկում ներառելու համար: Նշված ցանկի պարզման համար գրություններ են ուղարկվել համապատասխան մարմիններին, ինչպես նաև ուսումնասիրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից ստացված փաստաթղթերի փաթեթները:

Թվով 54 կուսակցություններից ստացվել են նախնական տեղեկություններ, ինչի հիման վրա պարզվել է 2022 թվականին աուդիտի ենթակա կուսակցությունների ցանկը և նախորդ տարվա ընթացքում պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների ցանկի հետ մեկտեղ կազմվել է մեկ ընդհանուր ցանկ, ըստ որի՝ 2022 թվականին պետք է իրականացվի [թվով 11 կուսակցության](#)՝ 2021 թվականի տարեկան հաշվետվության աուդիտ:

Աուդիտորական ծառայությունների պայմանագրերի գների որոշման համար աուդիտորական կազմակերպություններին է ներկայացվել պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների վերաբերելի տվյալները՝ գնային առաջարկներ ներկայացնելու համար:

Աուդիտորական կազմակերպություններից ստացված գնային առաջարկների հիման վրա, փորձագետի ներգրավմամբ և սահմանված մեթոդաբանությամբ, որոշվել է աուդիտի ենթակա յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի՝ աուդիտորական ծառայությունների պայմանագրի արժեքը և Հանձնաժողովի կայքում հրապարակվել աուդիտորական կազմակերպությունների ընտրության [բաց մրցույթ](#):

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի վերաբերյալ հրապարակված հայտարարության վերաբերյալ ՀՀ-ում գործող բոլոր աուդիտորական կազմակերպություններին իրազեկելու համար համապատասխան գրությունն ուղարկվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ ՀԿ-ին:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ իրավական ակտերի մշակման աշխատանքները՝

✓ **««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ:**

Փաթեթում ընդգրկված նախագծերն ընդունվել են և օրենքով սահմանված կարգով հրապարակվել:

✓ **«Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N-02-Ն որոշում:**

Որոշման նախագծի մշակման փուլում կազմակերպվել է թվով 3 հանրային քննարկում՝

○ Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց հետ,



- աուդիտորական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ,
- կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Որոշման նախագիծն ընդունվել է և օրենքով սահմանված կարգով հրապարակվել:

✓ «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N-03-Ն որոշում

Որոշումն ընդունվել է Հանձնաժողովի կողմից և օրենքով սահմանված կարգով հրապարակվել:

✓ «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծ:

Որոշման նախագծի մշակման փուլում կազմակերպվել է 2 հանրային քննարկում՝

- աուդիտորական կազմակերպությունների ներկայացուցիչների,
- կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Նախագիծն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքներ և առաջարկություններ ներկայացնելու համար:

✓ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծ:

Որոշման նախագիծն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքներ և առաջարկություններ ներկայացնելու:

6. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

6.1 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻՑ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վարչության կանոնադրությամբ սահմանված գործառույթներն են.

1) Պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների,



նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների ուսումնասիրություն և ուսումնասիրության արդյունքներով/արդյունքների հիման վրա տեղեկանքի/ արձանագրության կազմում՝ Հանձնաժողովին ներկայացնելու նպատակով.

2) Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ) մշակում.

3) Էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրում.

4) Բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ կատարելու համար առաջարկության ներկայացում.

5) Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկության մշակում.

6) Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մեկնաբանությունների կազմում.

7) Անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրություն վարումը և սահմանված կարգով տվյալների ներկայացումը հրապարակման.



- 8) Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների (կանոնագիրք) մշակում.
- 9) Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի մշակում.
- 10) Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի մշակում.
- 11) Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկայի ամփոփում և դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.
- 12) Իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- 13) Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության բարելավման վերաբերյալ իր լիազորությունների շրջանակում առաջարկությունների ներկայացում.
- 14) Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի վերաբերյալ իր լիազորությունների շրջանակում առաջարկությունների ներկայացում.
- 15) Հանձնաժողովի կողմից մշակվող կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակմանը իր լիազորությունների շրջանակում մասնակցություն և առաջարկությունների ներկայացում.
- 16) Իր գործունեության վերաբերյալ անհրաժեշտ հաշվետվությունների կազմում.
- 17) Հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվության մշակման աշխատանքներին մասնակցություն՝ իր գործունեության մասով.
- 18) Հանձնաժողովում ձևավորված, ինչպես նաև միջգերատեսչական և այլ աշխատանքային խմբերի աշխատանքներին իր լիազորության շրջանակում մասնակցություն.
- 19) իր գործառույթներից բխող կարողությունների բարելավման և այլ երկրների (մարմինների) հետ փորձի փոխանակման նպատակով միջազգային սեմինարների, համաժողովների, տեսակոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների մասնակցություն.
- 20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացում:



Հաշվետու ժամանակահատվածում Վարչության կողմից իրականացվել են թվարկված գործառույթներից բխող աշխատանքներ, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ գործառույթներ, որպես օրինակ՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչներին մեթոդական աջակցության տրամադրումը, բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ կատարելու համար առաջարկության ներկայացումը, ինչպես նաև բարեվարքության համակարգի վերաբերյալ վիճակագրության վարումը հնարավոր չի եղել իրականացնել՝ հաշվի առնելով, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը նոր է ներդրվել և դեռևս լիովին գործարկված չէ: Պետական մարմիններում, թեև ֆորմալ առումով նշանակված են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ/պատասխանատուներ, վերջիններիս գործունեությունը կարգավորող իրավական դաշտը թերի է: Ուստի, սույն գործառույթներին այս փուլում հնարավոր չէ անդրադառնալ:


2022 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովը չի ստացել նաև էթիկայի հանձնաժողովների որոշումների վերանայման դիմումներ, հետևապես, դրանց վիճակագրությունը ևս հնարավոր չէ ներկայացնել սույն հաշվետվությամբ:

6.2 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Վարչությունն իր գործառույթների շրջանակներում 2022 թվականի առաջին կիսամյակում շարունակել է պաշտոնատար անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների վերաբերյալ դեպքերի ուսումնասիրությունները: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 26 դիմում: Ստացված դիմումներից 18-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 2-ը՝ շահերի բախմանը, 1-ը՝ այլ սահմանափակումներին, 1-ը՝ վարքագծի կանոններին, 1-ը՝ նվերների ընդունմանը, ևս 3-ը՝ այլ բովանդակությամբ:



2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վարչության կողմից ուսումնասիրված դիմումներ (հատ)



2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վարչության կողմից ուսումնասիրված մեդիա հրապարակումներ (հատ)



6.3 ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև



պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: Նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը մեկնաբանում է օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումներ, վարքագծի սկզբունքները, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները:

Նշված գործառույթի շրջանակներում ուսումնասիրվել են Հանձնաժողովին հասցեագրված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման և վարքագծի կանոնների վերաբերյալ դիմումներ/գրություններ, դիմումատուներին տրամադրվել են նշված դրույթների վերաբերյալ պարզաբանումներ: Դիմումների գերակշիռ մասը վերաբերել է հանրային պաշտոնների և/կամ հանրային ծառայության պաշտոնների հետ այլ աշխատանքի համատեղելիությանը: Ստացված դիմումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրային իշխանության մարմիններում դեռևս պահպանվում է հանրային պաշտոնին/հանրային ծառայության պաշտոնին զուգահեռ այլ/կողմնակի գործունեություն իրականացնելու կամ պաշտոնավարմանը զուգահեռ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու միտումը: Համեմատաբար ավելի փոքր թվով դիմումներ ստացվել են կոնկրետ իրավիճակում շահերի բախման առկայությանը/ դրա վերաբերյալ մեկնաբանության տրամադրմանը, ևս մեկ դիմում՝ վարքագծի կանոնի մեկնաբանմանը:

Հարկ է նաև նշել, որ Հանձնաժողովը վարքագծի կանոնների մեկնաբանման վերաբերյալ դիմումներին նախկինում հնարավորություն չի ունեցել անդրադառնալու՝ պայմանավորված Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների հաստատված չլինելու հանգամանքով: Կարելի է ենթադրել, որ Տիպային կանոնների հաստատման արդյունքում այդ դիմումների քանակն առաջիկայում կավելանա:

6.4 ԴԻՄՈՒՄՆԵՐ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիմում 1.

Արդյո՞ք համայնքի ավագանու անդամի պաշտոնը համատեղելի է մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնի հետ:



«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է: Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Հետևապես՝ համայնքի ավագանու անդամի՝ համայնքային քաղաքական պաշտոնը համատեղելի չէ գլխավոր քարտուղարի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի հետ:

Դիմում 2.

Արդյո՞ք համայնքի ավագանու անդամի պարտականությունները համադրելի են Միասնական սոցիալական ծառայության փորձագետի պաշտոնի հետ:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով: Հանրային իշխանության մարմիններում փորձագետի աշխատանքը քաղաքացիական աշխատանք է, ինչը նշանակում է, որ այն չի հանդիսանում հանրային ծառայություն, հետևաբար քաղաքացիական աշխատանք կատարող անձանց՝ այդ թվում փորձագետների վրա չեն տարածվում հանրային ծառայության բարեվարքության համակարգի դրույթները, այդ թվում՝ անհամատեղելիության պահանջները:

Դիմում 3.

Արդյո՞ք հանրային ծառայությունը/ հանրային ծառայության պաշտոնը համադրելի է օպերայի թատերախմբի մենակապարի աշխատանքի հետ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական



գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և **ստեղծագործական** աշխատանքից:

Նույն հոդվածի 14-րդ մասի իմաստով մշակույթի և արվեստի երկեր ստեղծելը կամ մեկնաբանելը համարվում է ստեղծագործական աշխատանք, ուստի՝ օպերային թատերախմբի մենակատարի աշխատանքը՝ որպես ստեղծագործական գործունեություն համատեղելի է հանրային ծառայության հետ:

Դիմում 4.

Արդյո՞ք ավագանու անդամի պարտականությունները համադրելի են Միասնական սոցիալական ծառայության ստորաբաժանման ղեկավարի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի հետ:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Համաձայն սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամի պաշտոնը համայնքային քաղաքական պաշտոն է: Նշված իրավակարգավորումների իմաստով՝ համայնքի ավագանու անդամի պաշտոնը համատեղելի չէ Միասնական սոցիալական ծառայության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի հետ:

Դիմում 5.

Արդյո՞ք կա որևէ անհամադրելիություն հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի կողմից համադրելության կարգով համալսարանում դասավանդելու, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում դասավանդելու (դասեր վարելու) և խորհրդափոխություն տրամադրելու ոչ առևտրային կազմակերպությունում՝ աշխատանքային ժամերից դուրս և ոչ աշխատանքային օրերին:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ



պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, **կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:**

Ըստ նույն հոդվածի 13-րդ կետի՝ կրթական աշխատանք է համարվում ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը: Նշված իրավակարգավորումների իմաստով՝ հայեցողական պաշտոնը համատեղելի է համալսարանում դասավանդելու, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում դասավանդելու (դասեր վարել) հետ, մինչդեռ ոչ առևտրային կազմակերպությունում խորհրդատվության տրամադրումը չի կարող համատեղվել հանրային պաշտոնի հետ, քանի որ չի հանդիսանում գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանք:

Դիմում 6.

Արդյո՞ք Միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալի պաշտոնը կարող է համադրվել հասարակական կազմակերպության հիմնադրի/նախագահի պաշտոնի հետ:

Համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի **ոչ առևտրային կազմակերպության** կարգավիճակ: «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, **որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում**, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Նշյալ նորմերի համադրումից բխում է, որ օրենսդրությամբ ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ վերջինիս անդամակցելու արգելք հանրային ծառայողի համար նախատեսված չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման աշխատանքը հանրային ծառայողի կողմից իրականացվում է վճարովի հիմունքներով:

Դիմում 7.



Արդյո՞ք առաջին արյանի ընդհանուր իրավասության դադարանի դադարվորի պաշտոն զբաղեցնող անձը կարող է պաշտոնավարման ընթացքում առևտրային կազմակերպության բաժնեմաս ստանալ որպես նվիրատվություն և նվիրատվությունն ընդունելուց հետո անմիջապես հանձնել այն հավատարմագրային կառավարման:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման: Օրենքի ներկա կարգավորումների իմաստով՝ ընկերության բաժնեմասը նվիրատվություն ստանալը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրում բաժնեմասի գրանցումը և **համաժամանակյա** հանձնումը հավատարմագրային կառավարման, ըստ էության, չի հակասի 31-րդ հոդվածի պահանջներին: Միևնույն ժամանակ, պետք է բացառել որևէ կերպ այդ ընկերության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը պաշտոնատար անձի ներգրավվածությունը:

Դիմում 8.

Արդյո՞ք քաղաքացիական ծառայողը կարող է հասարակական կազմակերպության գործադիր մարմնում անվճար հիմունքներով պաշտոն զբաղեցնել:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է հասարակական կազմակերպությունների կարգավիճակը, համաձայն որի՝ հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի **ոչ առևտրային կազմակերպության** կարգավիճակ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, **որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում**, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նշված նորմերի համադրումից բխում է, որ օրենսդրությամբ ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ գործադիր մարմնում) արգելք հանրային



ծառայողի համար նախատեսված չէ, իսկ հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ նման աշխատանքը հանրային ծառայողի կողմից իրականացվում է վճարովի հիմունքներով:

Դիմում 9.

Արդյո՞ք դադարի ազդի ինքնավար պաշտոնի հետ համապեղելի է այլ անձանց հետ համահեղինակությամբ վճարովի հիմունքներով գիտական հետազոտության անցկացմանը մասնակցելը:

Թե՛ «Հանրային ծառայության մասին» օրենքով, թե՛ ոլորտային՝ «Դատախազության մասին» օրենքով այլ վճարովի աշխատանքի կատարման սահմանափակումից որպես բացառություն սահմանված է **գիտական, կրթական և ստեղծագործական** աշխատանքի կատարումը: «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ գիտական աշխատանք է համարվում գիտական կազմակերպությունում, հիմնարկում, բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ **այլ կերպ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական** աշխատանքներ կատարելը: Հետևապես՝ գիտահետազոտական աշխատանքի կատարումը, ինչպես նաև գիտական հետազոտության անցկացմանը մասնակցելը՝ որպես գիտական աշխատանքի մաս, թույլատրելի է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար և համատեղելի է պետական ինքնավար պաշտոն զբաղեցնելու հետ:

Դիմում 10.

Կարո՞ղ է արդյոք քաղաքացիական ծառայողը հաշվառվել որպես խնամատար ծնող և երեխայի նկատմամբ խնամատարություն ստանձնել:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, **կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:**

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի սահմանմամբ՝ խնամատարությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպումն է այլ ընտանեկան միջավայրում իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված, որակավորված անձի միջոցով մինչև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի



վերացումը: Խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով վճարվում են դրամական միջոցներ՝ Կառավարության սահմանված կարգով և չափով: Խնամատարության հետ կապված հարաբերությունները, այդ թվում նաև խնամատարության դիմաց տրվող վարձատրությունն իրականացվում է ՀՀ մարզպետարանի, խնամատար ծնողի և օրինական ներկայացուցչի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա, ինչից բխում է, որ խնամատարությունն Օրենքի իմաստով հանդիսանում է հանրային ծառայության հետ անհամատեղելի՝ վճարովի այլ աշխատանք:

Դիմում 11.

Արդյո՞ք Արդարադատության ակադեմիայում որպես դատավորների թեկնածուների հավակնորդներ ուսումնառություն անցնելը համապեղելի է հանրային ծառայության պաշտոնի հետ:

Արդարադատության ակադեմիայի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի աշխատակիցներ հանդիսացող և դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումն ամբողջապես ուսումնական գործընթաց է, չի ենթադրում աշխատանքային հարաբերություններ (աշխատանք) և դրա դիմաց վարձատրության ստացում, և հետևապես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի հանգեցնի անհամատեղելիության պահանջների խախտման:

Դիմում 12.

Արդյո՞ք պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը համապեղությամբ կարող է հանդիսանալ համայնքի ավագանու անդամ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները **չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Անհամատեղելիության սույն պահանջները կիրառելի են պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, հետևապես՝ վերջիններս չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված՝ համայնքի ավագանու անդամի պաշտոն:

Դիմում 13.

Որևէ կազմակերպության տնօրենի/հիմնադրի կամ ֆիզիկական անձի կողմից լիազորված լինելով հարկային հաշիվների դուրսգրման ծրագրում և հաշվեպնդությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում հաշվեպնդություններ ներկայացնելը կարո՞ղ է դիտարկվել իբրև



անհամատեղելիության պահանջի խախտում քաղաքացիական ծառայողի համար:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, **որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նույն օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպության **ներկայացուցչական**, կարգադրիչ կամ կառավարման **գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը** համարվում է ձեռնարկատիրական գործունեություն:

Ներկայացուցչությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, որի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից **լիազորագրի**, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար: Օրենսգրքի 321-րդ հոդվածի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Այսպիսով՝ լիազորագրի հիման վրա կազմակերպության անունից հանդես գալը **ներկայացուցչական գործառույթ** է: Հետևապես՝ առևտրային կազմակերպության անունից հանդես գալը և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում հաշվետվություններ ներկայացնելը օրենքի իմաստով կոիտարկվի որպես ներգրավվածություն առևտրային կազմակերպության ներկայացուցչական գործառույթների իրականացմանը՝ հանգեցնելով անհամատեղելիության պահանջի խախտման:

Դիմում 14.

Արդյո՞ք Արդարադատության ակադեմիայում որպես ունկնդիր մասնագիտական պատրաստում (ուսումնառություն) անցնելը համատեղելի է դատախազի ինքնավար պաշտոնի հետ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազի պաշտոնը պետական ինքնավար պաշտոն է, ուստի վերջինիս նկատմամբ կիրառելի են սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները:



Միևնույն ժամանակ, Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների կարգավիճակը սահմանված է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձինք Ակադեմիայի ունկնդիրներ են:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված՝ Արդարադատության ակադեմիայում ուսումնառություն անցնող անձինք տվյալ կարգավիճակով պայմանավորված չեն հանդիսանում հանրային պաշտոն զբաղեցնողներ, ուստի «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները վերջիններիս վերաբերելի չեն:

Դիմում 15.

Արդյո՞ք մարզպետի խորհրդականի պաշտոնը համադրելի է ավագանու անդամի պաշտոնի հետ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մարզպետի խորհրդականի պաշտոնը պետական հայեցողական պաշտոն է, որի նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները: Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սույն օրենսդրական կարգավորման իմաստով՝ մարզպետի խորհրդականի՝ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը չի կարող միաժամանակ զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված՝ համայնքի ավագանու քաղաքական պաշտոն:

Դիմում 16.

Արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնող անձը սեփականության իրավունքով իրեն պարկանող գույքը վարձակալության հանձնելու համար պարտավոր է այն հանձնել հավաքարմագրային կառավարման:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, *զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ*, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:



Նույն հոդվածի 8-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ սեփականության իրավունքով պատկանող գույքը վաճառելը կամ որոշակի վճարի կամ հատուցման դիմաց վարձակալության հանձնելը ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում:

6.5 ԴԻՄՈՒՄՆԵՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիմում 1.

Արդյո՞ք քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր բաժնեմասնակցությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի օգտագործման/վարձակալության նպատակով պայմանագրի կնքումը կարող է դիտարկվել իբրև շահերի բախման իրավիճակ: «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն **իր լիազորություններն իրականացնելիս** կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է **անձի լիազորությունների շրջանակում** այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը:

Հաշվի առնելով, որ նշված վարձակալության պայմանագրի կնքումը չի առնչվում պաշտոնական լիազորությունների իրականացման հետ, և պայմանագիրը կնքելիս պաշտոնատար անձը հանդես է գալիս որպես ֆիզիկական անձ՝ սույն պայմանագրի կնքումը չի հանգեցնում շահերի բախման իրավիճակի:

6.6 ԴԻՄՈՒՄՆԵՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիմում 1.

Որո՞նք են Հանձնաժողովի լիազորությունները տեսչական մարմնի ղեկավարի կողմից մարմնի աշխատակցի նկատմամբ հարուցված ծառայողական քննությունների ընթացակարգերի ենթադրյալ խախտումների և ցուցաբերվող խտրական վերաբերմունքի դեպքում:



Ծառայողական քննությունների անցկացման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 814-Ն որոշմամբ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Հանձնաժողովը վերանայում է էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները:

Քանի որ ծառայողական քննությունը չի անցկացվել համապատասխան մարմնի էթիկայի հանձնաժողովի կողմից, ուստի դիմումում նշված խնդրի առնչությամբ Հանձնաժողովը չունի որևէ լիազորություն: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ դիմումի ստացման պահին Հանձնաժողովի կողմից դեռ հաստատված չեն եղել հանային ծառայողների վարքագծի տիպային կանոնները՝ Հանձնաժողովն այդ փուլում հնարավորություն չի ունեցել քննելու դիմումի առարկան տիպային կանոնների համատեքստում:

6.7 ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հանձնաժողովը, ի թիվս այլ լիազորությունների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում կարող է հարուցել վարույթ: Մասնավորապես, սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: Նույն հոդվածի 5-րդ մասի սահմանմամբ՝ լրատվամիջոցների հրապարակումները կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ իրավիճակային շահերի բախման դեպքի առերևույթ հատկանիշ: Նշված լիազորության շրջանակներում Հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության կողմից իրականացվող պարբերական մեդիա մոնիթորինգի արդյունքում ի հայտ են բերվել առերևույթ



վերը նշված խախտումների հատկանիշներ պարունակող մեդիա հրապարակումները, որոնք ուսումնասիրվել են Հանձնաժողովի կողմից:

Այսպես, մեդիա մոնիթորինգի արդյունքում վեր հանված դեպքերի առնչությամբ 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վարչությունն իրականացրել է 6 մեդիա հրապարակման ուսումնասիրություն: Նշված հրապարակումներից 1-ը վերաբերել է շահերի բախմանը, 3-ը անհամատեղելիության պահանջներին, 2-ը՝ այլ սահմանափակումներին:

Հանձնաժողովի կողմից նախկինում ուսումնասիրված հրապարակումներում, որպես օրինակ՝ 2021 թվականին իրականացված ուսումնասիրություններում, գերակշռում էին պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ պետական գնումների գործընթացին մասնակցության դեպքերը (նախորդ [հաշվետվությունը](#) հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում): Ընդ որում, նշված դեպքերի ուսումնասիրության արդյունքում, չնայած պաշտոնատար անձանց՝ գնումների գործընթացի վրա ունեցած ուղղակի/անուղղակի ազդեցության վերաբերյալ առկա մտահոգություններին, Հանձնաժողովը հնարավորություն չէր ունեցել ապահովելու իրավական գործընթացներ՝ շահերի բախման առերևույթ խախտման արձանագրման հիմքերի բացակայության պատճառով: Մեդիա մոնիթորինգի և հրապարակումների ուսումնասիրության արդյունքում վեր հանված խնդիրները արձանագրվել են Հանձնաժողովի կողմից՝ վերաբերելի օրենսդրական կարգավորումների համատեքստում/ օրենսդրական փոփոխությունների նախագծերի շրջանակներում դրանց անդրադառնալու նպատակով:

2022 թվականի առաջին կիսամյակում ուսումնասիրված հրապարակումներից երկուսը վերաբերել են հնարավոր հովանավորչության դեպքերի՝ հանրային իշխանության մարմիններում միմյանց նկատմամբ անմիջական վերադասությամբ/ենթակայությամբ աշխատանքին, ևս երկու հրապարակում վերաբերել է Ազգային ժողովի պատգամավորների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ վերջինիս մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը դադարեցված է եղել պաշտոնավարման պահին, ուստի անհամատեղելիության պահանջի խախտման դեպքով վարույթ հարուցելու հիմքերը բացակայել են:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված մեդիա հրապարակումներն են՝

1. Սևադա Ղազարյան, [Ընտրողական մոտեցում և շահերի բախում. ՄԻՊ գրությանը ՀՀ-ն արձագանքի հետքերով](#), Փաստերի ստուգման հարթակ, փետրվարի 4, 2022, 17:28,



2. Առաջին լրատվական ալիք, 3 անշարժ գույք, 1 ավտոմեքենա. պատգամավոր Սերգեյ Բագրատյանի ունեցվածքը, հունվարի 28, 2022, 21:22, [3 անշարժ գույք, 1 ավտոմեքենա. պատգամավոր Սերգեյ Բագրատյանի ունեցվածքը \(lurer.am\)](#),
3. Ժողովուրդ օրաթերթ, [«Խնամի-ծանոթ-բարեկամ»-ը՝ ակտուալ. Գնել Սանոսյանի կինն աշխատում է ամուսնու ղեկավարած նախարարությունում](#), մարտի 30, 2022, 08:10,
4. Լուսինե Պետրոսյան, Հրապարակ, [Վահան Քերոբյանը նախարար է. թե՛ ֆիկցիա](#), ապրիլի 8, 2022, 16:25,
5. ArmDaily լրատվական կայք, [«Արդյոք Գագիկ Զհանգիրյանը ստանում է և կենսաթոշակ, և աշխատավարձ. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, թերևս, պետք է հետաքննի»](#), ապրիլի 14, 2022, 11:10,
6. Վահե Սարուխանյան, Հետք լրատվական կայք, [«Փաշինյանի մերձավորներն իրենց ընկերությունները չեն հայտարարագրել»](#), ապրիլի 25, 2022, 15:40:

6.8 ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի Հանրապետության գնահատման 4-րդ փուլի միջանկյալ զեկույցով (հաստատված 2021 թվականի սեպտեմբերի 21-22-ին) առաջարկվել է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու պատգամավորների՝ առևտրային կազմակերպություններում պաշտոններ զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ դրա շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցումը: Ի ապահովումն սույն հանձնարարականի կատարման և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահված լիազորությունների իրականացման՝ Հանձնաժողովը 2022 թվականի հունիսին սկսել է իրականացնել պատգամավորների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ազգային ժողովի բոլոր 107 պատգամավորների 2021 թվականի շահերի հայտարարագրերը, հայտարարագրված տվյալները համադրվել/համեմատվել են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) հարկ վճարողների համակարգի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրների տվյալների հետ:

Նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ շուրջ 8 պատգամավոր տարեկան հայտարարագրում չեն ներկայացրել առևտրային կազմակերպություններում ունեցած իրենց բաժնեմաս/երը: Նշված



կազմակերպությունները, ՊԵԿ հարկ վճարողների համակարգի տվյալների համաձայն, գործող կազմակերպություններ են:

Շահերի հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ 4 պատգամավոր չի ներկայացրել հայտարարագրված բաժնեմասերի հավատարմագրային կառավարման պայմանագրերը (ընդհանուր թվով՝ 5 առևտրային կազմակերպության բաժնեմասերի վերաբերյալ): Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսին հարցումներ է ուղարկել վերջիններին՝ հավատարմագրային կառավարման պայմանագրերը Հանձնաժողով ներկայացնելու պահանջով:

Պատգամավորների մասնակցությամբ/ներկայացվածությամբ մյուս առևտրային կազմակերպությունների վերաբերյալ, որոնց գործունեությունն ուսումնասիրության իրականացման պահին ժամանակավոր դադարեցված է եղել ՊԵԿ հարկ վճարողների համակարգի տվյալների համաձայն, Հանձնաժողովը հարցում է ուղարկել ՊԵԿ՝ պարզելու այդ ընկերությունների գործունեության դադարեցման հիմքերը և ժամկետները: Նշված տեղեկությունները ստանալուց հետո Հանձնաժողովը հնարավորություն կունենա գնահատելու անհամատեղելիության պահանջների խախտումները և անհրաժեշտության դեպքում ապահովելու համապատասխան իրավական ընթացք:

Միաժամանակ, նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ազգային ժողովի պատգամավորների շուրջ 28 %-ը որևէ կերպ ներգրավված է եղել ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ նախքան պատգամավորական մանդատի ստանձնումը: Սա, իհարկե, չի նշանակում, որ բոլոր նշված դեպքերում վերջիններին կողմից խախտվել են Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները, այդուհանդերձ, նույնիսկ պաշտոնի ստանձնումից հետո առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցության և/ կամ գործադիր մարմիններում ներկայացվածության դադարեցման պարագայում այս ցուցանիշը Հանձնաժողովի գնահատմամբ մտահոգիչ է:

6.9 ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6.9.1 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Վարչության կողմից 2022 թվականի առաջին կիսամյակում շարունակվել են Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մշակման աշխատանքները: Տիպային կանոնները մշակվել են «Հանրային ծառայության



մասին» օրենքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակվել է Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետի հետ համատեղ, ինչպես նաև տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ/նամակագրություններ տեղական փորձագետների հետ:

Նախագծի մշտական համար հիմք են հանդիսացել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոնները¹⁹, ՄԹ Թրանսփարենսի Ինթերնեյշնլի Գլոբալ հակակոռուպցիոն ուղեցույցը²⁰, միջազգային այլ փաստաթղթեր, ինչպես նաև տարբեր երկրների ներպետական իրավական ակտեր: Նախագծի մշակման աշխատանքներում ուսումնասիրվել են նաև Հայաստանի Հանրապետության տարբեր պետական մարմինների կողմից արդեն իսկ մշակված և գործող ներքին կանոնագրքերը և դրանցում ներառված կարգավորումները:

2022 թվականի փետրվարին նախագծի վերաբերյալ Վարչության կողմից ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա լրամշակվել է Նախագիծը:

Հանրային քննարկումներ

2022 թվականի մարտի 15-ին Նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am): Միաժամանակ նախագիծը ուղարկվել է կարծիքի թվով 72 շահագրգիռ պետական մարմիններին, տեղի են ունեցել քննարկումներ թիրախային խմբերի հետ (Հասարակական կազմակերպությունների, փաստաբանների պալատի, գիտական, կրթական շրջանակի և գործարար ոլորտի ներկայացուցիչներ): Արդյունքում, նախագծի վերաբերյալ ստացվել է ավելի քան 400 առաջարկ, որոնք ամփոփվել են Հանձնաժողովի կողմից:

Հանրային քննարկումների ընթացքում ստացված դիտարկումները եղել են Նախագծի թե՛ տեխնիկական և թե՛ ձևակերպումների իրավական որոշակիության վերաբերյալ: Ընդ որում, տարբեր գերատեսչությունների, հանրային քննարկումների մասնակիցների կողմից ներկայացված առաջարկներից/դիտարկումներից որոշները կրկնվել են՝ բովանդակելով միևնույն փոփոխության անհրաժեշտությունը: Որպես օրինակ՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացվել է առաջարկ՝ հստակեցնելու՝ արդյո՞ք Նախագծով սահմանվող կանոնները վերաբերի են հանրային ծառայողի ծառայողական պարտականությունների կատարմանը, թե կարգավորելու են նաև

¹⁹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոնները: [Appendix 2 \(coe.int\)](#)

²⁰ ՄԹ Թրանսփարենսի Ինթերնեյշնլի Գլոբալ հակակոռուպցիոն ուղեցույց: [9. Gifts & Hospitality | Anti-Bribery Guidance | Transparency International \(antibriberyguidance.org\)](#)



հանրային ծառայողի գործունեությունը՝ ծառայողական պարտականություններից դուրս: Արդյունքում տիպային կանոնների կիրառման շրջանակը հստակեցվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Նախագծի ամենից քննարկվող դրույթներից/կանոններից է եղել ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում պետական խորհրդանիշների օգտագործմանն առնչվող կանոնը: Քննարկումների արդյունքում սույն կանոնը փոփոխվել է՝ ներառելով նաև օտարերկրյա պատվիրակությունների/միջազգային կառույցների խորհրդանիշների օգտագործման դեպքերը: Սոցիալական ցանցերով հաղորդակցության վերաբերյալ կանոնները ևս ոչ միանշանակորեն են ընդունվել թիրախային խմբերի ներկայացուցիչներ կողմից և ակտիվ քննարկումների հանգեցրել: Թեև կանոնը դիտարկվել է նաև խոսքի ազատության իրավունքի իրացման համատեքստում, հարկ է նշել, որ սոցիալական ցանցերում հանրային ծառայողների վարքագծի կանոնակարգման նպատակը հանրային մարմնի և հանրային ծառայության նկատմամբ վստահության և հանրային մարմնի հեղինակության պահպանումն է, ուստի, սույն կանոնով սահմանափակվում են այն գործողությունները, որոնք արատավորում են/կարող են արատավորել հանրային այդ հեղինակությունը:

Նույնաբովանդակ առաջարկներ են ստացվել տիպային կանոնների՝ պարտադիր և խրախուսելի բաղադրիչների տարանջատման առնչությամբ: ՀՀ քննչական կոմիտեն, օրինակ, վարքագծի խրախուսելի կանոնները դիտարկել է առավելապես իբրև անձի մասնավոր կյանքին վերաբերելի, և հաշվի առնելով, որ դրանց խախտումն իրավական հետևանք չի ենթադրում, առաջարկել է հանել Նախագծից: Այս առնչությամբ, կարևոր է նշել, որ հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնները նպատակ են հետապնդում օրինակելի վարքագծի այնպիսի հիմնական նորմեր սահմանելու, որոնց հետևելը կբխի հանրային ծառայողի ընդհանուր բարեվարքությունից և բարեխղճությունից: Քննարկումների արդյունքում Նախագծից հանվել են տիպային կանոնների խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքներին վերաբերող դրույթները: Համապատասխան իրավական հետևանքները ենթակա են սահմանման տիպային կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության առանձին մարմինների կողմից հանրային ծառայություն առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):

Նախագծի որոշ հասկացությունների առնչությամբ քննարկումների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել մանրամասնել դրանք հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից Նախագիծն առավելապես դիտարկվել է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների համատեքստում: Առաջարկների քննարկման արդյունքում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծի վերաբերյալ



ստացված բոլոր առաջարկությունները հասանելի են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի «Նորություններ» [բաժնում](#):

2022 թվականի մայիսի 17-ին Նախագծի ամբողջական փաթեթը (որոշում, հավելված, հիմնավորում, թվով 2 ամփոփաթեթ և տեղեկանք) ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության նպատակով: ՀՀ արդարադատության նախարարությունից իրավական փորձաքննության արդյունքները ստանալուց հետո՝ 2022 թվականի հունիսի 17-ին, Նախագիծը հաստատվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի N 01-Ն [որոշմամբ](#):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1	
Ընդհանուր դրույթներ	5
ԲԱԺԻՆ 2	
Հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և վարքագծի կանոնները	9
ԵՆԹԱԲԱԺԻՆ 1	
Հանրությանը ծառայելու գիտակցման սկզբունքը	9
Գլուխ 1. Օրինականություն	9
Գլուխ 2. Կանոններ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց համար	9
ԵՆԹԱԲԱԺԻՆ 2	
Հանրային շահին հավատարմության սկզբունքը	11
Գլուխ 3. Բարեխղճություն և հավատարմություն հանրային շահին	11
Գլուխ 4. Թափանցիկություն և հաշվետվողականություն	13
Գլուխ 5. Շահերի բախման կառավարում	13
Գլուխ 6. Նվերների ընդունման արգելք	15
ԵՆԹԱԲԱԺԻՆ 3	
Բարեկրթության և հարգալիրության սկզբունքը	16
Գլուխ 7. Հարգալիրություն	16
Գլուխ 8. Բարեկրթություն	17
Գլուխ 9. Հաղորդակցությունը հանրային լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով	18
ԵՆԹԱԲԱԺԻՆ 4	
Բարեխղճության սկզբունքը	20
Գլուխ 10. Պաշտոնեական տեղեկատվության չիրապարակում	20

6.9.2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ԿԻՐԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների ընդունումից հետո առանձին պետական մարմիններ, ելնելով իրենց ծառայության առանձնահատկություններից, մշակելու են իրենց ոլորտային կանոնագրքերը: Այս գործընթացի պարզեցման նպատակով Հանձնաժողովը մշակում է Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման



ուղեցույցների (այսուհետ՝ Ուղեցույց) նախագիծը՝ տեղական փորձագետների հետ համատեղ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է տեղական փորձագետի կողմից կազմված ուղեցույցի նախագծի նախնական ուսումնասիրություն: Նախագծի վերաբերյալ Վարչության կողմից ներկայացված առաջարկությունները տրամադրվել են Հանձնաժողովին:

6.9.3 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների ընդունումից հետո Հանձնաժողովի կողմից նախատեսվում է հաստատել Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք): Այս նպատակով միջազգային փորձագետի կողմից մշակվել է Կանոնագրքի նախագիծը, որի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել է նախագծի նախնական ուսումնասիրություն, որի արդյունքում Վարչության կողմից ներկայացված առաջարկությունները և դիտարկումները տրամադրվել են Հանձնաժողովին:

6.9.4 ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ

2021 թվականին մեկնարկած՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի մշակման աշխատանքները շարունակվել և վերջնականացվել են 2022 թվականի սկզբին:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի արդյունքներով Հայաստանի Հանրապետության համար սահմանվել/նախանշվել են պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ, այդ թվում նաև շահերի բախման դեպքերի



կառավարման վերաբերյալ: Զեկույցով, մասնավորապես նախատեսվել է շահերի բախման և այլ սահմանափակումների համակարգի բարելավում: Որպես գործող կարգավորման բացթողում նշվել է վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող հանրային պաշտոն գբաղեցնող անձանց կողմից շահերի բախման իրավիճակներում գործելու դրույթը, որով նշված պաշտոնատար անձինք չեն պարտավորվում ձեռնպահ մնալ շահերի բախման իրավիճակում որոշումների կայացումից: Զեկույցը թերի է գնահատել նաև գործող օրենսդրությամբ տրվող շահերի բախման սահմանումը և դրա կարգավորման շրջանակը, ինչպես նաև գործնականում շահերի բախման խախտումների համար համաչափ պատասխանատվության միջոցների բացակայությունը: Վերոգրյալ հանձնարարականները հիմք են հանդիսացել հայեցակարգի լրամշակման համար, որով և արձանագրվել են առկա օրենսդրական բացթողումները:

Հայեցակարգի հիման վրա Եվրոպայի խորհրդի փորձագետներն իրականացրել են անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի վերլուծություն, ինչի արդյունքում տեխնիկական փաստաթղթի ձևաչափով Հանձնաժողովին են ներկայացրել իրենց դիտարկումներ ու առաջարկությունները:

Հանձնաժողովն, իր հերթին, ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցության շրջանակներում ներկայացրել է մշակված փաստաթղթերը և մասնակցել Նախարարության կողմից ներկայացված «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկումներին: Օրենսդրական նախագծերի փաթեթն այժմ լրամշակման փուլում է:

6.10 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԿԱՐԾԻՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Վարչության կողմից հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և դիտարկումներ/առաջարկություններ են ներկայացվել պետական մարմինների կողմից ստացված հետևյալ օրենսդրական նախագծերի/նախագծերի փաթեթների վերաբերյալ՝

- «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ,
- «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշում,
- «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը



հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշումների նախագծեր,

- «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթ,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիությունն ապահովող ընդհանուր պահանջները, ստանդարտները, նորմերը և կանոնները հաստատելու մասին» ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանի նախագիծ,
- Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի մոնիթորինգի կիսամյակային հաշվետվության նախագիծ:

6.11 ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ✓ 2022 թվականի մարտին Ազգային ժողով է ներկայացվել Հանձնաժողովի տարեկան հաղորդումը: Վարչությունը մշակել է Հաղորդման՝ իր գործառույթներին վերաբերելի բաժինները:
- ✓ Կազմվել են հաշվետվություններ ԳՐԵԿՈՒ-ի՝ գնահատման չորրորդ փուլի Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ ներկայացված միջանկյալ զեկույցի և ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման 5-րդ փուլի զեկույցի կատարման վերաբերյալ: